Ուղերձի բովանդակությունը նախընտրական տրամաբանության մեջ էր: Կարապետյանը հայտարարեց, որ բիզնես գործունեությունը թողնում է՝ դրանք վստահելով իր զավակներին, եւ քաղաքական պատասխանատվությունն իր վրա է վերցնում: Սա էր ուղերձի մեսիջը: Սա նշանակում է, որ Կարապետյանը քաղաքական նոր իրավիճակի մեկնարկ է տալիս:

Կարդացեք՝ էջ 4

Ռուսաստանի իշխանություններն արշավ են սկսել փաշինյանամերձ օլիգարխիայի դեմ: Ընդ որում, ռուսական մամուլն այլեւս չի էլ թաքցնում, որ դա արվում է Փաշինյանին եւ նրա իշխանությանը ֆինանսական հոսքերից զրկելու համար. «Հարված Հայաստանի վարչապետ Փաշինյանի «դրամապանակներին», որոնք գումար են կլանում Ռուսաստանից»:

Կարդացեք՝ էջ 5

Այն քաղաքական ուժը, որը հաղթանակ տարավ, բացի նրանից, որ Օրբանի կուսակիցն էր երկար ժամանակ եւ, այսպես ասած, գիտեր՝ ում, ինչպես քննադատել, կարողացավ լայն շերտերին միավորել: Նա վարեց ճիշտ քաղաքականություն, եւ Հունգարիայում ձայների փոշիացում տեղի չունեցավ, հետեւաբար, մենք պետք է հետեւություններ անենք:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 60 (4195), 14 ապրիլ, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Որոշ տեղեկություններով՝ ռուսական շրջանակները Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի փոփոխության հարցն են դիտարկում: Արա Աբրահամյանը 2000 թվականից ի վեր այս հասարակական կազմակերպության նախագահն է: 2003-ին ընտրվել է հայկական հասարակական կազմակերպությունների «Համաշխարհային հայկական կոնգրես» միջազգային միության նախագահ, ստեղծել է Գործարարների Ռուսաստան-Արգենտինա խորհուրդը եւ ներկայում դրա համանախագահն է՝ ռուսական կողմից: Նաեւ Ֆրանկո-ռուսական ասոցիացիայի համանախագահն է: Մի քանի անգամ վերընտրվել է ՀԿ նախագահի պաշտոնում, սակայն կան տեղեկություններ, որ այժմ ռուսական իշխանությունները դժգոհ են նրանից եւ նրան փոխարինողի թեկնածություններ են քննարկում: Ռուսական աղբյուրներն ասում են, որ ամենահավանականը երկրորդ նախագահի մամուլի նախկին խոսնակ, գրասենյակի նախկին պատասխանատու Վիկտոր Սողոմոնյանի թեկնածությունն է: Քննարկվում են նաեւ Կամո Ավագումյանի եւ Կարեն Շահնազարովի տարբերակները: «Ավալոն» ընկերության սեփականատեր, Ռուսաստանում «Մերսեդես»-ի ներկայացուցիչ Կամո Ավագումյանը, սակայն, ավելի շատ բիզնեսով է զբաղված, եւ համայնքի հարցերը հնարավոր է ստորադասվեն, իսկ Շահնազարովին ավելի շատ ռուսական շահերն են հետաքրքրում, քան՝ հայկական:

Ապրիլի 12-ին Սեւան համայնքի Գագարին բնակավայրում հանդիսավորությամբ նշել են Յուրի Գագարինի՝ տիեզերք թռչելու 65-ամյակը: Գագարինում Գագարինի արձանախմբի մոտ կայացել է բազմամարդ միջոցառում, որին մասնակցել են նաեւ Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան եւ Մոսկվայի տան մի շարք պաշտոնյաներ: Միջոցառումն իրականացվել է համայնքի մշակույթի պալատի հարեւանությամբ, որտեղ տեղադրված է տիեզերագնացի արձանը: Դրանից 500 մետր հեռավորությամբ համայնքի եկեղեցին է, որտեղ եւ կայանել է ՔՊ-ականների «ուրախ ավտոբուսը»: Օգտվելով առիթից, ՔՊ-ականները փորձել են օգտագործել հավաքված մարդկանց բազմությանը՝ նրանց ներկայացնելով որպես իրենց աջակիցներ, որոնք եկել են հանդիպելու Փաշինյանի հետ: Գագարինցիները Փաշինյանին տեղեկացրել են, որ նման միջոցառում է անցկացվում, բայց «ուրախ ավտոբուսի» «պասաժիրները» չեն մնացել եւ չեն մասնակցել միջոցառմանը:

Ոճի տարբերություն կա

Մի կողմից, ընտրակաշառք ու ադմինիստրատիվ ռեսուրսի դաժան չարաշահում, մյուս կողմից՝ քրեաիրավական մեթոդներով մրցակիցներին լռեցնել ու հանրության տարբեր շերտերի նկատմամբ հոգեբանական տեռոր կիրառել, վախի մթնոլորտ ձեւավորել, սպառնալիքներ, շանտաժ: Շատ պարզ սխեմա է օգտագործում այս իշխանությունը՝ վերարտադրվելու համար: Միշտ են այդ սխեմաները կիրառվել՝ այս կամ այն ուժգնության, բայց փաշինյանական իշխանությունը, որը եկել է արդար ընտրությունների, քաղաքացու քվեն հարգելու, ազատ ու հավասար մրցակցություն ապահովելու լոզունգներով եւ ընտրակեղծարարությունը դատապարտելու բոցաշունչ ճառերով, իրավունք չուներ ՀՀԿ-ից ավելի ՀՀԿ լինել եւ զոռբայությամբ իշխանություն վերցնելու բոլոր հին մեթոդները կիրառել: Արդեն ՔՊ-ական տասովշչիկները տեղերում սկսել են մարդկանց ցուցակագրել: Փոքր համայնքներում համայնքապետերը տեռոր են անում. ՔՊ-ին չընտրեք՝ գործից կզրկվեք, ոռոգման ջուր չեք ունենա, նպաստ չեք ստանա եւ այլն, եւ այլն: Ամենակարեւորը՝ զգուշացնում են, որ իմանալու ենք, թե ով ինչպես է քվեարկել, հույս չունենաք, որ կգնաք, դեմ կքվեարկեք ու կթաքնվեք ուրիշների թիկունքում: Բայց, իհարկե, նոր մեթոդներ էլ են կիրառում: Հանրապետականի թեկնածուները սոցցանցեր, լայվեր, սրտիկ-կորժիկ, շլյապա-կուկուռուզ չէին օգտագործում: Հանրապետականի ֆանտազիան հերիքում էր մարդկանց ստիպողաբար միտինգի բերելու, թաղի հեղինակություններով ճնշում գործադրելու եւ քվե «գնելու» համար: Ընտրողների մի մասն էլ դիմադրում էր՝ միտինգի կեսից փախչում էին, փողը վերցնում՝ ուրիշին ձայն տալիս: Սրանք լուրջ ռեժիսորական աշխատանք են կատարում՝ երգում, պարում, նվագում, ներկայացումներ բեմադրում, իբր սպոնտան զրույցներ, այցեր կազմակերպում: Եվ դա նաեւ իր սպառողն ունի:

Մեր տեղեկություններով, Էդմոն Մարուքյանի ղեկավարած ԼՀԿ-ի եւ Հովիկ Աղազարյանի ՄԱՍԿ-ի միջեւ նախընտրական բանակցությունները ձախողվել են: Մարուքյանն ու Աղազարյանը քննարկում էին հունիսի 7-ի ընտրություններին համատեղ մասնակցության ֆորմատը: Նրանց միջեւ համագործակցությունը սկիզբ էր դրվել ամիսներ առաջ, երբ օրակարգ մտած իմպիչմենտի գործընթացին Աղազարյանն ու Հակոբ Ասլանյանը դիտարկեցին Մարուքյանի՝ որպես վարչապետի թեկնածությունը: Իսկ նախընտրական ֆորմատը չի կայացել մարտավարական անհամաձայնությունների պատճառով, ԼՀԿ-ն մտադիր է միայնակ մասնակցել ընտրություններին, իսկ Աղազարյանենց մասով դեռ վերջնական որոշում չկա:

ԲԻԶՆԵՍԸ ԴԺԳՈՀ Է ՓԱՇԻՆՅԱՆԻՑ

Երեկ հայտնի դարձավ, որ Նիկոլ Փաշինյանը ճաշկերույթի է հրավիրել Հայաստանի խոշոր գործատուներին, նրանց թվում՝ Սամվել Ալեքսանյանին, Արտակ Սարգսյանին՝ ՍԱՍ-ի Արտակին, «Գրանդ քենդիի» սեփականատիրոջը, «Սինոփսիս», «Յուքոմ», «Թիմ» ընկերությունների տնօրեններին եւ այլոց: Հանդիպման մանրամասների վերաբերյալ կառավարությունից կցկտուր տեղեկություններ հաղորդեցին: Որոշ տեղեկություններով, հանդիպումը երկու նպատակ է ունեցել. նախ Ռուսաստանի՝ հայ գործարարների նկատմամբ սահմանափակումների ֆոնին հանգստացնող թերապիա անցկացնել եւ թույլ չտալ, որ գործարարները դուրս գան Նիկոլ Փաշինյանի դեմ՝ նրան մեղադրելով հակառուսական քաղաքականության եւ իրենց բիզնեսին վնասելու մեջ: Փաշինյանն ասել է, որ ամեն ինչ շուտով կկարգավորվի, եւ Ադրբեջանի հետ խաղաղության հեռանկարները նրանց առաջ այլընտրանքային շուկա կբացեն: Բացի այդ, սրանով փորձում են հանրությանը ցույց տալ, թե իբր բոլոր խոշոր գործարարներն իրենց հետ են: Մինչդեռ ստույգ լուրեր կան, որ գործարարներից ոմանք շատ դժգոհ են այս իշխանությունից եւ նրա վարած հեղհեղուկ ու անպատասխանատու քաղաքականությունից: Փաշինյանի օրոք իր բիզնեսն ընդլայնած, որդուն մարզպետ դարձրած Աշոտ Արսենյանի դեմ են Ռուսաստանում քրեական վարույթը վերսկսել՝ «Ջերմուկից» թունավորված եւ մահացած մարդու դեպքով, Պռոշյանի կոնյակի գործարանի արտադրանքն է արգելվել Ռուսաստանում: Խաչատուր Սուքիասյանի եւ մի խումբ այլ անձանց մուտքն է Ռուսաստան արգելված: Ամենակարեւորը՝ ռուսները փակել են զուգահեռ էքսպորտի ճանապարհը, որից ահռելի օգուտներ էին ստանում դրանով զբաղվող գործարարները եւ ՀՀ պետական բյուջեն՝ հարկերի տեսքով:

ՄԻՇՏ ԷԼ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆՔ, ԶՐՈՒՅՈՒՄ ԵՆՔ, ՍԱ ԱՌԱՋԻՆԸ ՉԷՐ

Նիկոլ Փաշինյանը երեկ աշխատանքային նախաճաշի էր հրավիրել Հայաստանի խոշոր գործարարներին:

Ա՛մ, ողջունելով ներկաներին, նշել է, որ հանդիպմանը հրավիրվել են Հայաստանում ամենաշատ աշխատատեղեր ստեղծած ընկերությունների ներկայացուցիչները, որոնք «2018 թվականից հիմնականում արձագանքող են եղել եւ շարունակում են արձագանքող լինել կառավարության քաղաքականություններին» եւ ստեղծել են 288 հազար աշխատատեղ: Պարզ է, որ սա նախընտրական հանդիպում է՝ հանրությանը ներշնչելու համար, որ խոշոր բիզնեսն իր կողքին է, բայց պարզ է նաեւ, որ այս բիզնեսմենները հնարավորություն չունեին՝ հրավեր ստանալու դեպքում չմասնակցել այս «նախաճաշին»՝ նրանց օդերը Փաշինյանն արագությամբ կփակեր:

Այնուամենայնիվ հետաքրքիր է, թե ովքեր են մասնակցել այս հանդիպմանը: Կադրերից նկատեցինք, որ ներկա էին բոլոր իշխանությունների կողքին գտնվող Սամվել Ալեքսանյանը՝ Լֆիկը, Արտակ Սարգսյանը՝ Սասի Արտակը, Բակուր Մելքոնյանը՝ պետական տենդերների շահող եւ բանակի մատակարար «Արտ լանչի» տերը, «Գրանդ քենդի» ընկերության սեփականատեր եղբայրներից ավագը՝ Միքայել Վարդանյանը, «Էրեբունի» բժշկական կենտրոնի տնօրեն Միքայել Մանուկյանը՝ Արտյոմ Քուշկյանի փեսան, Երեմյանների ներկայացուցիչը, «Սինոփսիս Արմենիա» ընկերության տնօրեն Հովիկ Մուսայելյանը, «Յուքոմ» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, «Թիմ» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Եսայանը: Ներկա էին նաեւ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, Արարատ Միրզոյանի կինը՝ Գոհար Աբաջյանը՝ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի տնօրենը: Մենք մի քանի հարց ուղղեցինք **Բակուր Մելքոնյանին**:

- Ինչի՞ մասին էր աշխատանքային նախաճաշը վարչապետի եւ էկոնոմիկայի նախարարի հետ: Ի՞նչ հարցեր քննարկեցիք:

- Քննարկումն այն մասին էր, թե Հայաստանի բիզնեսմեններն ինչ խնդիրներ ունեն, առհասարակ՝ խոշոր գործատուներն ինչ խնդիրներ ունեն՝ աշխատակիցների հետ կապված, եւ այլն: Մեծ ռիսկեր կան, որ աշխատակիցները, արհեստական բանականության զարգացման հետ կապված, կարող են կրճատվել, այսինքն՝ բիզնեսը կարող է զարգանալ, սակայն աշխատատեղերը կարող են կրճատվել, եւ նմանօրինակ խնդիրներ ենք քննարկել:

- Իսկ այդ հարցերը որքանո՞վ են վարչապետի գործառույթներին վերաբերում: Ի՞նչ կապ ունի վարչապետը բիզնես ոլորտի կրճատումների հետ:

- Էկոնոմիկայի նախարարն էլ էր նստած, իսկ վարչապետն ուզում էր ընդհանուր առմամբ լսել բիզնեսին վերաբերող խնդիրները:

- Կոնկրետ Դուք, որպես գործարար, ի՞նչ խնդիրներ ունեք ոլորտում, որոնց մասին խոսեցիք Փաշինյանի եւ Պապոյանի հետ:

- Աշխատատեղերի հետ կապված խնդիրներ կան:

- Նախընտրական այս փուլում երբ հանդիպում եք իշխանավորների հետ, դա չի՞ նշանակում, որ ուղղակիորեն աջակցում եք իշխանությանը:

- Անկեղծ ասած՝ մենք այս տարիների ընթացքում նման հանդիպումներ շատ ենք ունեցել, սա առաջին անգամը չէր: Մենք միշտ էլ պետական կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպում ենք, զրուցում ենք, սա հո առաջինը չէ, համենայնդեպս, մեր մասով հաստատ առաջինը չէր: Իմ անձնական կարծիքն այն է, որ բիզնեսի ներկայացուցիչներն անպայման պետք է պետության հետ համագործակցեն, անկախ այն բանից, թե ովքեր են իշխանությունները, պետք է բարձրաձայնել խնդիրները եւ այլն: Ես, որպես բիզնես ունեցող մարդ, փորձում եմ ամրապնդել համագործակցությունը պետության հետ: Պետք է կարողանալ ամրապնդել այդ կապը, որպեսզի առաջխաղացում լինի: Պետք է օգտվել նման առիթներից եւ զբաղվել այդ հարցերով:

- Փաշինյանի հետ նախորդ հանդիպումը ճիշտ էր եղել, ամեն դեպքում, այդ մասին ոչ մի անգամ չի գրվել, լուսանկարներ չեն հրապարակվել:

- Նախորդ տարի, դրանից առաջ էլ եղել են պարբերաբար:

- Դուք ի՞նչ կարծիք ունեք ընտրությունների հետ կապված: Աջակցո՞ւմ եք Փաշինյանին:

- Ես քաղաքականության հետ կապված հարցերով չեմ զբաղվում, իմը տնտեսականն է: Որեւէ կուսակցության հետ կապ չունեմ ես:

- Իսկ հարցեր չքննարկեցի՞ք՝ ընտրությունների հետ կապված:

- Ոչ, բացարձակ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔՊ-ՈՒՄ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԽՈՍՔԻՆ

Ն՛ախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը դեռ չի տրվել, սակայն Փաշինյանն իր թիմով օգտագործելով պետական միջոցները՝ ամեն շաբաթ մեծ շքախմբով, անվտանգության աշխատողների ու ոստիկանների ուղեկցությամբ շարունակում է մարզեր այցելել: Շաբաթ-կիրակի էլ նրանց ուրախ, բայց արդեն մահաբեր ավտոբուսը կամ, ինչպես ժողովուրդն է կնքել՝ «շառասյունը» մեկնում է քարոզարշավի: Այս կիրակի Փաշինյանի մարզային այցի ժամանակ Լոռի շտապելիս ոստիկանության մեքենան բախվել էր մեկ այլ մեքենայի, որի արդյունքում մեկ մարդկային կյանք խլվեց, 12 վիրավոր տեղափոխվեց հիվանդանոց:

Բայց դա չխանգարեց, որ Փաշինյանի թափառախումբն այցելի Լոռի, Տավուշ, Արագածոտն: Այս անգամ «ուրախ ավտոբուսի» «պասաժիրները» ոչ թե նախընտրական ցուցակի առաջին 50-յակից էին, այլ՝ ավելի հետին հորիզոնականներից, դիցուք՝ Անդրանիկ Քոչարյանը, Փարաքարի նախկին համայնքապետը՝ աղմկահարույց պատմությունների կիզակետում մշտապես հայտնված Լյուդվիգ Գյուլնազարյանը, ոչ պակաս աղմկահարույց պատմությունների մեջ հայտնված Կոջոյան կրթահամալիրի տնօրեն Ռուզան Տոնոյանը եւ այլք: Այս բոլորին հատ-հատ նկարահանում էին, ստիպում, որ սրտիկ ցուցադրեն: Որքան նկատեցինք, միայն Անդրանիկ Քոչարյանը ձեռքերի այդ ծամածռությունը չարեց:

Որոշ տեղեկություններով, թիմում որոշում ունեն՝ ամեն շաբաթ-կիրակի ավտոբուսի կազմը փոխել եւ մինչեւ հարյուրերորդ հորիզոնականում ընդգրկված թեկնածուներին հանել մարդամեջ՝ տանել քարոզարշավի, թիմին լիարժեք ներգրավել նախընտրական պայքարի մեջ, այդպիսով միայն հնարավոր բոլորին մասնակից դարձնել նախընտրական պայքարին: Բանն այն է, որ տեւական ժամանակ է՝ առաջին հիսունյակն առանձնացել է մնացած կազմից, մյուսներն իրենց լքված ու արհամարհված են զգում, եւ պարտվողական տրամադրություններ կան, որ գուցե իրենց իշխանությունը չի վերընտրվելու, եւ այդ պատճառով են 50 ընտրյալներով միայն պտտվում, իսկ մնացածը Նիկոլ Փաշինյանին տեսնում են միայն Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի օրերին եւ անորոշության մեջ են, չեն հավատում հաղթանակին, տառապում են, թե ամեն մեկը որտեղ է լինելու հունիսի 7-ից հետո, ինչ ճակատագիր է իրենց սպասվում: Չնայած Նիկոլ Փաշինյանը վարչության անդամներին հանձնարարել է աշխատանքներ տանել նախընտրական ցուցակի հետնամասում հայտնվածների, այն է՝ 100-րդից ներքեւ գտնվող թեկնածուների հետ եւ ասել, որ միայն իրենց ակտիվ աշխատանքի դեպքում է հնարավոր լինելու հաղթանակը, եւ որ ինքը բոլորի աշխատանքը տեսնելու է ու գնահատելու է հավուր պատշաճի, նաեւ հաղթանակի հույս ներշնչել: Այդուհանդերձ, ՔՊ-ականները, մի կողմ քաշված, սպասում են անձամբ Փաշինյանի հետ հանդիպումներին:

Ի դեպ, այս շաբաթ Փաշինյանը եւ իր կաբինետը հնարավոր է մի քանի օր անցկացնեն խորհրդարանում: Չորեքշաբթի օրվանից խորհրդարանում մեկնարկելու է կառավարության 2021-2025 թվականների ծրագրի նախորդ տարվա հաշվետվությունը, եւ Փաշինյանն այն ուզում է նախընտրական քարոզչության վերածել: Մեզ ասացին, որ շարքային ՔՊ-ականներից շատերը ոգեւորված են, վերջապես կկարողանան ուղիղ շփվել Փաշինյանի հետ եւ թեկուզ նրա ակնարկներից հասկանալ, թե ինչ է սպասվում: Ավելին, մեր աղբյուրները կատակեցին, որ ոմանք հուժկու ելույթներ են պատրաստում, որ Փաշինյանին իրենց հավատարմությունը ցույց տան ու ամրագրեն իրենց ապագա կարգավիճակը՝ իշխանության վերարտադրության դեպքում: Խորհրդարանից դուրս մնացողներն իրենց տեսնում են գործադիրում՝ փոխնախարարի, վարչության պետի կամ որեւէ ՊՈԱԿ-ի ղեկավարի պաշտոնում:

Ի դեպ, արդեն տեղեկություններ ենք ստանում, որ, ի տարբերություն էլիտար ՔՊ-ականների, շարքային ՔՊ-ականներն ակտիվ տասովկաների մեջ են, խոսքը տարածքային խորհուրդների ներկայացուցիչների մասին է: Երեւանի վարչական շրջաններում սկսել են «գույքագրել» յուրայիններին՝ ցուցակագրում են մարդկանց անձնագրերով եւ տեղեկացնում, որ ընտրությունների շեմին իրենց հետ կապ կհաստատեն: Հին ՀՀԿ-ական մեթոդները նորից սկսել են աշխատել, չի բացառվում, որ ընտրակաշառքի թեմա էլ լինի:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Հովիկ Աբրահամյանին չեն ուզում ՀՀ-ից դուրս թողնել

«Հրապարակ»-ը տարեսկզբին գրել էր, որ Հայաստանի նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի խափանման միջոց վարչական հսկողությունը եւ բացակայելու արգելքը 2025-ի տարեվերջին փոխվել է 20 միլիոն դրամ գրավով: Սակայն դատախազությունն այդքան էլ հաշտ չէ խափանման միջոցի այս փոփոխության հետ. տեղեկացանք, որ վերաքննիչից մերժում ստանալուց հետո գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը վճռաբեկ դատարան բողոք է տարել՝ նախկին վարչապետի խափանման միջոց գրավ կիրառելը բեկանելու մասին: Նա պահանջում է վճռաբեկից՝ բեկանել գրավը եւ սահմանել վարչական հսկողություն ու բացակայելու արգելք: Նպատակն այն է, որ Աբրահամյանին արգելեն ՀՀ-ից դուրս գալ: Հովիկ Աբրահամյանը, հիշեցնենք, մեղադրվում է փողերի լվացման, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու հոդվածներով: Գործը հարուցվել է դեռ 2018-ին, դատարան է մտել միայն 7 տարի անց: Փաստացի, Աբրահամյանը մեղադրյալի աթոռին է արդեն 7 տարի: Պետությունը նաեւ Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան հայց է ներկայացրել, Աբրահամյանից եւ նրա հետ փոխկապակցված անձանցից պահանջում է հօգուտ Հայաստանի բռնագանձել ենթադրյալ ապօրինի ծագման գույք: Պատասխանողների թվում են անգամ նախկին վարչապետի վարորդը, թիկնապահը, որոնց անունով ձեւակերպված գույքը դատախազությունը համարում է, որ պատկանում է նախկին վարչապետին, ուստի պահանջում է պետությանը վերադարձնել 59 անշարժ գույք, որից 15-ը՝ Երեւանում: Բացի այդ, պահանջում են 20 ավտոմեքենա, 20 ընկերությունում մասնակցություններ եւ բաժնետոմսեր, ինչպես նաեւ՝ 55 միլիոն դոլար: Գործը քննվում է 2023 թվականից: Վերջերս մի հայց էլ ներկայացվեց նրա եղբոր՝ ԱԺ նախկին պատգամավոր Հենրիկ Աբրահամյանի եւ նրան փոխկապակցված անձանց դեմ:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԿՅՈՍՔ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ «ՍԹՈՐԻՆԵՐԻ» ԴԺԳՈՀ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՇԱՏԱՆՈՒՄ ԵՆ

Փաշինյանի ամենշաբաթյա մարզային քարոզչական այցելությունները գնալով ողբերգական շեշտադրումներ են ստանում: Տեսարանները, որտեղ ՔՊ-ականները շրջում են գունավոր մանկապարտեզներով-դպրոցներով, մարդկանց քիչ են հուզում: Փոխարենը աստղաբաշխական դիտումներ են հավաքում վարչապետի ուղիղ եթերներից կտրած «սթորի»-ները, որտեղ այս կամ այն հարցով Փաշինյանի հետ զրույցի բռնվող քաղաքացիները քննադատում են նրան կամ իրենց «անհարմար» հարցերով փակուղի մտցնում: Այդ տեսարանները, որոնք նախկինների ժամանակ թաքցնում էին, մոնտաժում, հիմա վիրուսի արագությամբ տարածվում են ՁԼՄ-ներով, տարբեր հարթակներով:

Անցած շաբաթ-կիրակի էլ, երբ թիմը շրջում էր Տաշիրով, Ստեփանավանով, Վանաձորով, Սպիտակով, Ապարանով, նման անհարմար միջադեպերը շատ էին: Քաղաքացիների անգամ ամենաանմեղ պահանջներին Փաշինյանը պատասխանելու ոչինչ չուներ: «Ինչ ա պետք անել»,- ամեն անգամ հարցնում է իրեն որեւէ խնդրով մոտեցողներին, բայց լսելով մարդուն, անմիջապես հուսախաբ է անում նրան. ասում է, որ կամ ոչինչ անել հնարավոր չէ, կամ քաղաքացուն օգնելն արգելված է օրենքով ու կարող է կաշառք դիտվել, կամ էլ այն, ինչի մասին քաղաքացին խնդրում է, ապագայի լուծելու հարց է, ոչ այսօրվա:

Այսպես. Եղվարդում մի տղամարդ Եղվարդի ջրամբարի հարցը բարձրացրեց՝ դրա մասին խոսում-խոսում են, բայց ոչ մի կերպ չեն կառուցում: «Չի լինի»,- ասաց Նիկոլը ու, ինչպես ասում են, «կյանքը պատմեց», թե բա՝ ջրի մի մասը պետք է մղվեր պոմպակայանով, բայց այժմ նախագիծն անիրագործելի է, այդքան հոսանք չկա: «Մտածում ենք այնպիսի նախագիծ իրականացնել, որպեսզի ջուրը գա եւ ջրամբարի մեջ լցվի ինքնահոս եղանակով: Կարող է մաշտաբը փոխելու անհրաժեշտություն լինի: Ծավալը փոքրացնենք եւ այդպես կառուցենք ջրամբարը»: Հետո ասաց այն, ինչ ասում էր 2019-ին, 2025-ին, գործադիրի նիստերի ժամանակ՝ որ չկա Հայաստանում համայնք, որը ջրի խնդիր չունենա: Վատ վիճակի այս հավերժական արձանագրումները հոգնեցնում են: Այո, Փաշինյանը չի թաքցնում խնդիրները, բայց դրանից սայլը տեղից չի շարժվում: «Դա սլյոզ» գոհ քաղաքացիներ էլ կան, իհարկե: Մի կին, որը Եղվարդում գրեթե սեր խոստովանեց վարչապետին, բառացիորեն ասելով՝ «դա սլյոզ գոհ ենք»: Բայց տպավորությունը զրոյացավ, երբ հայտնվեց մի նոր ողբերգական սյուժե: Աբովյանում Փաշինյանին մոտեցավ մի տարեց կին, խզված, լացած ձայնով պաղատեց, թե թոփալ ոտքով եկել է հանդիպման, որ ասի՝ չի կարողանում լողանալ: «Ես միայնակ, պատերազմի մասնակցի մամա եմ, ամուսինս մահացած է, տղես մասնակցել է Շուշիի ազատագրմանը, ամուսնուս խաբեցին, տարան Ուկրաինա, որ աշխատի՝ մահացավ: Մայրաբար խնդրում եմ, օգնեք՝ գոնե բաղնիքս սարքեմ, լողանամ, մայրաբար խնդրում եմ, սառնամանիքի մեջ եմ ապրում»,- ասաց նա մռայլված Փաշինյանին, որն ընդամենը կմկմաց, թե բա՝ չի կարող նյութական խոստում տալ, նախընտրական շրջան է: «Օգնեք, ես չգիտեմ, չօգնեք՝ ես կգամ Ձեզ հետ Ձեր տուն»,- լացում էր տատիկը:

Տաշիրցի մի «դուխով» տղամարդ՝ Սամվել Ավետիսյանը, բարձրաձայնեց այն, որը շատերն են երազում լսել. «Պարոն Փաշինյան, ինձ հետաքրքրում է, ո՞նց եք կարծում՝ ՀՀ-ում դուխով կամ հպարտ քաղաքացի մնացե՞լ է, բացի ձեր ղեկավար անձնակազմից»: Փաշինյանն իր ձեւով՝ փիլիսոփայելով, փորձեց դուրս գալ տակից, տղամարդը նոր, ավելի վատ հարցեր տվեց. «Եթե ամեն օր ինձ ծեծեք, ու դրանից հետո սկսեմ ամեն ինչ տալ, պարզ է, չէ՞, ինձ էլ չեք ծեծի»: Կամ՝ արդյո՞ք մեզ պետք ա խաղաղություն, եթե մի անձի հետ ա կապված էդ խաղաղությունը: Փաշինյանն այս վեճում պարտվեց: Հարցը թողեց մարդու բերանում ու փախավ, կրկնելով դժվար պահերին իրեն փրկող ցիտատը «Շվեյկից». «Եթե իմ մորաքույրը տղամարդ լիներ, ես նրան քեռի կասեի»:

ՔՊ-ի վարկանիշին հարվածող էպիզոդներից ամենախայտառակն ապրիլի 11-ի վաղ առավոտյան Քուչակ-Ապարան ճանապարհին «ուրախ ավտոբուսն» ուղեկցող ՆԳՆ ոստիկանության գվարդիայի «Հոնդա» ավտոբուսի եւ «Նիսսան» մեքենայի բախումն էր: Վարորդը տեղում մահացավ, ուղեւորներից 12 անձ վիրավոր է: «Մահաբեր են՝ դեռ 2018 թվականից»,- առավել տարածված մեկնաբանությունն էր վթարի մասին պատմող նյութերի տակ՝ ուղղված իշխանություններին:

Տհաճ միջադեպերը Փաշինյանի մարզային քարոզարշավի ժամանակ, որը նա բավականին վաղ էր սկսել՝ իր ընտրազանգվածն ավելացնելու հույսով, կարծես հակառակ արդյունքն ունեն: Այցելությունից այցելություն դրանք շատանում են, արդյո՞ք չի հասկանում Փաշինյանը կամ նրա իմիջմեյքերները, որ այս ձեւով ի վերջո զրոյացնելու են իրենց վարկանիշը: Քաղտեխնոլոգ **Կարեն Քոչարյանը** կարծում է, որ Փաշինյանը եւ նրա թիմը չեն պատկերացրել, որ այդպես կլինի, եւ ընթացքում եթե տեսնեն, որ շատանում են այդ միջադեպերը, ուղիղ եթերը «կթարգեն»: «Իրենք դա փորձել են ցույց տալ որպես ժողովրդավարության ապոգեյ, որ իրենք այնքան ժողովրդավար են, որ հասկանում են՝ կլինեն դժգոհ մարդիկ, բայց դա իրենց հետ չի պահում ժողովրդավարությունից: Բայց սա մինչ այն պահն է, մինչեւ որ հասկանան, որ այդ դժգոհները ոչ թե 10-ից 1-2-ն են, այլ 10-ից 7-8-ն են»:

Զգո՞ւմ եք ինչ-որ փոփոխություն իր առաջին եւ վերջին մարզային այցելությունների հետ կապված ռեակցիաների միջեւ: «Իհարկե: Հատկապես՝ մարզերում, ովքեր տեսնում են միայն Հ1-ի Հայաստանը, իսկ իրական շփումը լինում է տարին մեկ՝ ընտրությունից ընտրություն, երբ տարբեր ընդդիմադիր ուժեր գնում ու կոտրում են այն կարծրատիպը, որ օրվա իշխանությանը կարելի է նաեւ քննադատել: Այդ ժամանակ Պանդորայի արկղը բացվում է, այ, հիմա այդ բացվելու պրոցեսն է սկսվել: Էս անգամ՝ մի քիչ ավելի շուտ, որովհետեւ ինքն այն շուտ սկսեց: Սովորաբար դա լինում է վերջին մեկ ամսում»,- ասում է Կարեն Քոչարյանը:

Ըստ նրա, շրջապատի քծնանքն է մեծ դեր խաղում, երբ շրջապատն չի ստացվում, որ երիտասարդները պարզապես ծաղրում են, որ թոշակառուների ընտրազանգվածը, որն իր ամենակուռ ընտրազանգվածն էր, կորցնում է. երբ ասաց՝ 10 հազարը տամ, ինչ է անելու, ու հետո բյուջեն հաստատելուց հետո, հասկանալով դա, չգիտես ինչ միջոցներից՝ ավելացրեց թոշակը: Ապա վերադարձավ հին տաշտակին: Եվ հիմա ուզում է պահել իր ընտրազանգվածը, ոչ թե նորը վերցնել, այլ գոնե պահել այն, որը կա, համոզելով այդ մարդկանց, որ ինքն իրենցից մեկն է, այսինքն, կարող է ուտել, վրան թափել՝ ավտոբուսում, առանց լվացվելու եւ այլն»,- նշեց քաղտեխնոլոգը: Կարեն Քոչարյանը Փաշինյանին առաջարկում է ընտրել հենց այդ կարգախոսը՝ «Ես ձեզնից մեկն եմ», ինչն ավելի ազնիվ կլինի նրա կողմից:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԻՆՉՔԱՆՈՎ ԵՆ ՄԱՔՐՈՒՄ, ՃԻՇՏ ԵՆ ՄԱՔՐՈՒՄ, ԹԵ ՉԷ՝ ՄԵԶ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Երեւանն ամեն անձրեւից հետո վերածվում է Վենետիկի: Ապրիլի 12-ի հորդառատ անձրեւը հերթական անգամ բացահայտեց մայրաքաղաքի անպաշտպան վիճակը՝ բնության տեղումների առաջ. փողոցները բառացիորեն դարձան գետեր ու լճեր, ավտոմեքենաներն ընկղմվեցին ջրի մեջ: Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք եւ այլ վարչական շրջաններում պատկերը նույնն էր՝ ջրհեղեղ, քաոս, կաթվածահար երթեւեկություն: Մարդիկ ուշանում էին, մեքենաները՝ վնասվում, իսկ քաղաքը պարզապես կանգնել էր մի քանի ժամ շարունակ տեղացող անձրեւի պատճառով:

Քաղաքապետարանը մեղքը գցում է «Վեոլիա ջրի» վրա՝ պնդելով, որ ջրատարների մաքրումն ու սպասարկումը նրանց պատասխանատվության շրջանակում են: Սակայն քաղաքացին քաղաքապետարանից է դժգոհ, եւ քաղաքի համար պատասխանատվությունը Ավինյանի աշխատակազմինն է: Մանավանդ՝ քաղաքացիները վճարում են բարձր գույքահարկ, թանկ աղբահանության վճարներ, հսկայական գումարներ՝ կայանատեղիների համար, փոխարենը ստանում են փոսերով լի ճանապարհներ, փոշոտ միջավայր, ամեն անձրեւից հետո՝ իրական ջրհեղեղ:

Փոխանակ համակարգային լուծումներ գտնելու՝ պատասխանատուները շարունակում են մեղքը միմյանց վրա բարդել: Գլխավոր պատասխանատուն, երեւանցու աչքով, «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկն է, որը պետք է զբաղվի Երեւանի «լյուկերի» մաքրմամբ, եթե անգամ «Վեոլիան» չի անում, ծուլանում է, ինչո՞ւ պետք է քաղաքապետարանը ձեռքերը ծալած նստի եւ սպասի հաջորդ անձրեւին: Հիմնարկի տնօրեն **Սաշա Կատվալյանը** «Հրապարակ»-ի հարցին՝ «լյուկերի» մաքրման հետ կապված, պատասխանում է. ««Լյուկերը» մաքրելը «Վեոլիայի» գործառույթն է, բայց այս մասով մենք իրենց աջակցում ենք, իրենք մաքրում են, հանում են, փողոցի վրա լցնում են, մենք դա տեղափոխում ենք աղբավայր, մենք պարտավորվածություն չունենք, այս պահին ընդամենը աջակցում ենք իրենց: Նախորդ շաբաթ, երբ 100 հասցեներում անձրեւատարներ են մաքրվել, մեր ուժերով տեղափոխվել են անձրեւատարներից հանված հողն ու աղբը: Ես «Վեոլիայի» լավ աշխատելու կամ վատ աշխատելու մեջ մտնելու իրավունք չունեմ եւ ոչ էլ մտնում եմ, պետք եղած ժամանակ հանուն քաղաքի պե՞տք է աջակցել՝ աջակցում եմ այս մասով, իրենք, օրինակ, ցերեկը մաքրում են, մենք գիշերը տեղափոխում ենք, այդքանով է իմ աջակցությունը: Ինչքանով են մաքրում, ճիշտ են մաքրում, թե չէ՝ այդ հարցերին ես չանդրադառնամ, մեզ հետ առնչություն չունի»:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար **Ռոմիկ Մխիթարյանն** էլ մեզ ասաց, որ իրենց մոտ 2 տեղում է խնդիր առաջացել, որոնցից մեկը լուծված է. «Մեր վարչական շրջանում 2 լուրջ խնդիր ունեինք. մեկը՝ Բաբաջանյանի կամրջի տակ, մյուսը՝ 4-րդ գյուղը: Կամրջի տակի խնդիրը լուծված է, այնտեղ էլ ջուր չի կուտակվում, ամբողջ գիշեր տղերքը հետեւել են, կարողացանք այդ խնդիրը լուծել: 4-րդ գյուղի ճանապարհի խնդիրն էլ ենք լուծում, մի քանի օրվա մեջ դա էլ կվերանա, մեզ մոտ նորմալ է»: Ըստ Ռոմիկ Մխիթարյանի՝ քաղաքապետարանում նոր նախագիծ կա, որով առաջարկվում է խնդրահարույց հատվածներում անձրեւատարների նոր գծեր կառուցել. «Կա էդ ամեն ինչը, կիրականացվի»:

«Վեոլիա ջուր» ընկերության մամուլի խոսնակը չպատասխանեց մեր հարցերին, ինչպես միշտ, ասաց, որ գրավոր դիմենք իրենց:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Շաբաթ օրը Ազատության հրապարակում տեղի ունեցավ «Ուժեղ Հայաստան» կուսակցության հանրահավաքը:

ԱՆՀՆԱՐ Է ԿԱՁՄԵԼ ՄԻ ՑՈՒՑԱԿ, ՈՐԸ ԲՈԼՈՐԻՆ ԴՈՒՐ ԿԳԱ

Տնային կալանքի տակ գտնվող Սամվել Կարապետյանն ուղերձով կոչ արեց հանրությանը՝ համախմբվել իր շուրջ: Հանրահավաքը, ինչպես սպասվում էր, արժանացավ ծայրահեղ գնահատականների՝ խիստ դրական եւ բացասական: Ինչպիսի՞ հանրահավաք էր, ինչ մեսիջներ էր պարունակում: Զրուցել ենք քաղաքագետ **Հակոբ Բադալյանի** հետ:

- Ի՞նչ տպավորություն ստացաք՝ երկար ընդմիջումից հետո առաջին հանրահավաքն էր, ինչ դրական կողմեր եւ թերացումներ կնշեք: Այն ինչի՞ մասին էր, ի դեպ, Կարապետյանի ուղերձը սկզբում ասում էին, որ արհեստական բանականության միջոցով է սարքված, սակայն պարզվեց, որ իրական է:

- Ընդհանուր առմամբ, հասկանալի է, որ հանրահավաքի հետ կապված տեսակետներն ու մոտեցումները խիստ բեւեռացված են, քանի որ տեղեկատվական իմաստով ամեն բան ենթակա է նախընտրական տրամաբանությանը եւ ամեն բան ծավալվում է քարոզչական տրամաբանությամբ կամ հակաքարոզչությամբ: Իմ կարծիքով՝ այս հանրահավաքը, որպես այդպիսին, ավելի շատ նշանավորում էր ինչ-որ մեկնակետային ակտիվ քարոզարշավ եւ ավելի ակտիվ՝ նախընտրական շրջափուլի իմաստով, որը կմեկնարկի առաջիկա երկու ամիսներին: Այս տրամաբանությամբ՝ բարձր նոտայով մեկնարկային իմաստ ուներ հանրահավաքը: Ինչ վերաբերում է Կարապետյանի ուղերձին, ապա, այո, այն իրական էր, ըստ որոշ հավաստի աղբյուրների, արհեստական բանականության միջամտություն չկար: Ուղերձի բուն բովանդակության մասով այն եւս տեղավորվում էր նախընտրական տրամաբանության մեջ: Կարապետյանը հայտարարեց, որ բիզնես գործունեությունը թողնում է՝ դրանք վստահելով իր զավակներին: Սա նշանակում է, որ ինքն անմիջականորեն քաղաքական պատասխանատվությունն իր վրա է վերցնում: Սա էր, թերեւս, այս ուղերձի նորությունն ու մեսիջը: Սա նշանակում է, որ Կարապետյանը քաղաքական նոր իրավիճակի մեկնարկ է տալիս՝ իր ուժի հետ միասին:

- Ասում են, որ ելույթները փոքր-ինչ պաթետիկ էին, քննադատում են «Ուժեղ Հայաստանի» ընտրական ցուցակի թեկնածուներին, որ նրանց որոշ մասը տարբեր թիմերի ներկայացուցիչներ են՝ ճամբարափոխ են եղել:

- Ըստ իս՝ անհնար է կազմել մի ցուցակ, որը բոլորին դուր կգա, խոսքը ցանկացած ուժի մասին է՝ առհասարակ: Միշտ էլ ցուցակները դառնում են տարբեր քննարկումների եւ քննադատությունների առարկա: Ինչ վերաբերում է ելույթներին, ապա ցանկացած հանրահավաք ունի իր ժանրի կանոնները: Ժանրի մեջ է մտնում նաեւ պաթոսը, եւ առանց դրա չի լինում հանրահավաք: Եթե տվյալ պահին ընտրված է այդ ձեւաչափը, ապա հասկանալի է, որ ժանրի կանոնները պետք է կիրառվեն: Սա դարձյալ ոչ միայն Սամվել Կարապետյանի հարահավաքին է վերաբերում, այլ՝ բոլորին: Այս հանրահավաքն ուներ եզրագծային՝ ընտրական փուլից առաջ բարձր նոտայով մեկնարկի տրամադրություն: Կարծում եմ՝ հանրահավաքի բուն շարժառիթը դա էր: Մնացյալը պետք է գնահատել երկամսյա աշխատանքով, նայած թե որքանով Կարապետյանի ուժը կկարողանա բարձր պահել այն նոտան, որով նա փորձում էր ակտիվ մնալ այս ընթացքում:

- Հանրահավաքի մասնակիցների տարբեր թվեր են ասում, իշխանությունն ասում է՝ 12 հազար, ընդդիմությունը՝ 40, մի տեղ կարդացի՝ մոտ 15 հազար:

- Առկա իրավիճակում բազմամարդ հանրահավաք էր: Ոմանք միտված են մասնակիցների թիվն ուռճացնել, ոմանք էլ՝ նվազեցնել միտումնավոր կերպով, սակայն ակնհայտ է, որ այն բազմամարդ հանրահավաք էր, թեպետ սա պայքարի եզրափակիչ հանրահավաք չէր եւ չուներ բազմամարդ երեւալու խնդիր: Որպես այդպիսին, այս հանրահավաքը լուծեց իր առջեւ դրված խնդիրը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐ ԳՐԱՖԻԿԸ ԿԳՈՐԾԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ



«Կարծում եմ, որ ջրամատակարարման ժամանակացույցի նման փոփոխությունը նախընտրական շրջանով է պայմանավորված»,- ասաց ԱԺ պատգամավոր Գառնիկ Դանիելյանը՝ անդրադառնալով ջրամատակարարման 17-ժամյա գրաֆիկին անցման ժամկետը մայիսի 1-ի փոխարեն հուլիսի 1 սահմանելուն: Հիշեցնենք, որ մեծ աղմուկ բարձրացավ, երբ «Վեոլիա ջուրը» հայտարարեց, որ անցնում է 17-ժամյա գրաֆիկի: Որպեսզի այդ աղմուկը չազդի նախընտրական տրամադրությունների վրա, իշխանության հրահանգով ընկերությունը հայտարարեց, որ նոր գրաֆիկին անցումը հետաձգվում է:

«Ինչո՞ւ որոշեցին ժամկետը փոփոխել, ինչ-որ մոնիտորինգ արվե՞լ է, թե՞ նոր գրաֆիկով որքանով պատշաճ կկարողանան իրականացնել ջրամատակարարումը, որքանո՞վ են պահելու այդ գրաֆիկը: Ես իմ օրինակով կարող եմ ասել, որ չեն նշում ջրանջատման մասին, բայց ջրանջատում է լինում: Մի քանի օր առաջ 1 օրով ջրանջատում էր եղել, որի մասին չէին հայտնել»,- ասաց պատգամավորը: Նրա խոսքով, հայտարարություններով հնարավոր չէ այդ խնդիրները լուծել, եթե խորքային աշխատանքներ չեն կատարվում. «Դրա մասին ես տարիներ շարունակ խոսել եմ, որ ջրի շատ կորուստներ կան, գծերն անմխիթար վիճակում են, կապիտալ ներդրումներ չեն արվում: Այսինքն՝ ամբողջը բերելու էր հասցներ այդ կոլապսային վիճակին: Հիմա, ընտրություններով պայմանավորված, այդ ժամանակահատվածը փորձում են ֆռռացնեն, ինչ-որ կերպ ընտրություններն անցկացնեն, մարդկանց աչքերին թոզ փչեն, հետո լինելու է այն, ինչի մասին միշտ խոսել ենք, դեռ ավելի վատ վիճակ է լինելու, քան մինչ այս: Խայտառակ վիճակ է, բավականին լուրջ կոռուպցիոն ռիսկեր կան թե՛ ջրային ռեսուրսների կառավարման առումով, թե՛ ընդհանուր ջրային ցանցի՝ ՋՕԵ-ների հետ կապված»:

Հիշեցնենք, որ դեռ փետրվարին «Վեոլիա ջուր» ընկերությունը հրապարակել էր 2026 թ. ջրամատակարարման ժամանակացույցը, ըստ որի՝ Հայաստանի բնակավայրերի գերակշիռ մասում մայիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը ջրամատակարարումը կլինի 17-ժամյա՝ 07:00-24:00-ն, ինչն առաջացրել էր մարդկանց դժգոհությունը: Ապա տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը հայտարարեց. «Կառավարության միջամտության արդյունքում ջրամատակարարման ժամանակացույցի փոփոխություն չի լինի»: Ջրային կոմիտեի նախագահ Արամազդ Ղալամքարյանը նշել էր, թե գրաֆիկը կվերանայվի, բայց 24-ժամյա ջրամատակարարում ապահովել, միեւնույն է, հնարավոր չէ: Բարձրացրած աղմուկից հետո «Վեոլիա ջուր» ընկերությունը պաշտոնական կայքից հեռացրեց ջրամատակարարման գրաֆիկը:

Մենք գրավոր հարցում էինք արել «Վեոլիա ջուր» ընկերություն, թե ինչու նոր գրաֆիկը մինչ այժմ չի հրապարակվել, խնդրել էինք տրամադրել նոր գրաֆիկը: Նոր գրաֆիկից տեղեկացանք, որ Երեւանի մի շարք վարչական շրջաններում 17-ժամյա ջրամատակարարում է լինելու, այն գործելու է հուլիսի 1-ից: Մարզերում ջրամատակարարման գրաֆիկը կփոխվի մայիսի 1-ից:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Անգամ ֆեյսբուքյան գրառումներս են արտատպել՝ ներկայացրել մարզպետարան

Խնածախի դպրոցի տնօրեն Արտավազդ Աբրահամյանը դիմել է վարչական դատարան՝ իրեն տնօրենի պաշտոնից ազատելու մասին վարչական ակտն անվավեր ճանաչելու, պաշտոնում վերականգնելու եւ վնասների փոխհատուցման պահանջով: Վարչական դատարանը հայցադիմումը վերահասցեագրել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որը 2 անգամ հայցադիմումը հետ է վերադարձրել:

Հետաքրքրվեցինք, թե ինչն է եղել Աբրահամյանին աշխատանքից ազատելու պատճառը: Պարզվում է՝ Խնածախի միջնակարգ դպրոցը ձմռանը ջեռուցվել է փայտի վառարաններով, նախկին տնօրենն առաջարկել է դպրոցը գազիֆիկացնել, քանի որ դպրոցի կողքով է անցնում գազատարը: Խնդիրը բարձրաձայնելուց հետո սկսվել են պրոբլեմները. «Գազի հարցը բարձրացնելու համար ինձ կանչել են մարզպետարան, կոնկրետ փոխմարզպետ Հայկ Հարությունյանը նկատողություն է արել, թե՝ ինչի՞ ես նման խնդիր բարձրաձայնում, այդ խնդիրները ժամանակի ընթացքում կլուծվեն, եւ այդտեղից էլ սկսվեց իմ հանդեպ իրենց ոչ բարյացակամ վերաբերմունքը: Հետագայում իրենք կարողացան դպրոցի կոլեկտիվում ստորագրահավաք կազմակերպել, իբր ես բուլինգի եմ ենթարկում աշակերտներից մեկին, ուսուցիչների հետ վատ եմ խոսում, վիրավորում եմ: Ընդ որում, այդ ստորագրահավաքը կազմակերպել էր կոլեկտիվի մի մասը, մյուս մասը չի մասնակցել: Այդ ստորագրահավաքին մասնակցել են ծնողներ, որոնց հարցրել եմ՝ ինչ խնդիր եք բարձրաձայնել, որ այդ խնդիրը չեմ լուծել, որ բողոք եք հասցրել մարզպետարան: Դիմում-բողոքի տակ ստորագրողների մեծամասնությունը եղել են տղամարդիկ, ինչը խիստ կասկածելի է, որ նրանք կարող էին սթափ վիճակում նման թուղթ ստորագրել: Ընդամենը 2 կին ծնող էր բողոքել, մեկը ներկայիս տնօրենի պաշտոնակատարի հարեւանուհին է, մյուս ծնողը բռնկուն բնավորություն ունի, բոլոր տնօրեններից, այդ թվում ինձնից աշխատանք է ուզել, սակայն ոչ ես, ոչ էլ ինձնից առաջ եղած տնօրեններն իրեն աշխատանքի չեն ընդունել, քանի որ որեւէ մասնագիտություն չուներ, մենք էլ թափուր հաստիք չունեինք՝ իրեն համապատասխան: Երեք անգամ կազմակերպել, բողոք են գրել, որի արդյունքում ինձ ազատել են աշխատանքից»:

Կարծում եք՝ արդեն ունեին տնօրենի թեկնածու, դրա համար էլ աշխատանքից ազատել են Ձեզ: «Այո, ամեն ինչ արվել է ներկայիս պաշտոնակատարի համար, որը եղել է դպրոցի զինղեկը եւ հենց իր նախաձեռնությամբ է ստորագրահավաք կազմակերպել եւ բողոքող ուսուցիչներին անձամբ իր մեքենայով տարել է Սյունիքի մարզպետարան: Զարմանալին ինձ համար այն է, որ իմ դեմ բողոքող ուսուցչուհիներ կային, որ իմ կողմից անգամ վատ հայացքի չեն արժանացել: Անգամ անանուն նամակ էին ուղարկել մարզպետարան, որ դպրոցի աշակերտներից մեկը դպրոց չի գալիս, ինչ ուզում, անում է, եւ դրա մասին ես տեղյակ եմ: Իրականում, այդ աշակերտն այդքան չի բացակայել, պարապմունքների գնացել է Գորիս, այն էլ՝ դասերից հետո: Իրենք անգամ իմ ֆեյսբուքյան գրառումներն են արտատպել, ներկայացրել մարզպետարանին, իբր այլասերվածության տարածում իմ կողմից, այն դեպքում, երբ որ բժշկական էջերից մեկում, որպես կենսաբան, մի հարցի եմ պատասխանել»,- ասաց նախկին տնօրենը, ապա հավելեց, որ իրեն աշխատանքից ազատելիս գյուղացիները ստորագրահավաք էին կազմակերպել՝ ի պաշտպանություն իրեն, սակայն մարզպետարանը դա հաշվի չի առել: Աբրահամյանը նաեւ նշեց, որ մարզպետարանը կողմնապահ է գտնվել, ով իր անձի դեմ էր, նրանց լսում էին, իսկ ով փորձում էր ճշմարտությունը ներկայացնել եւ դրական կարծիք հայտնել իր մասին, այդ մարդկանց չէին լսում:

Հիշեցնենք, որ 2026-27 ուստարին Խոզնավարի, Վաղատուրի եւ Խնածախի միջնակարգ դպրոցները միանալու են, իսկ աշակերտները կհաճախեն Խնածախում կառուցվող կրթահամալիր: Այսինքն, այս դպրոցի տնօրենը բոլոր հնարավորություններն ուներ մնալու եւ աշխատելու՝ նրան էլ այս ձեւով են ազատել, տեղ բացել իրենց հավատարիմ մեկի համար:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԷՄ

ՆՈՐ ՀԱՐՎԱԾ ՓԱՇԻՆՅԱՆԻ «ԴՐԱՄԱՊԱՆԱԿՆԵՐԻՆ»

Փաշինյանը վստահեցնում է, որ Ռուսաստանի իշխանությունների հետ իր հարաբերությունները շատ լավ են, որ ինքը ՌԴ նախագահի հետ բարձր մակարդակով հանդիպում է պլանավորել, «այդ թվում՝ հունիսի կեսին», դրանով փորձելով հանրությանը համոզել, որ նույնիսկ ՌԴ նախագահն է վստահ եւ աջակցում է իր հաղթանակին, մինչդեռ փաստերը խոսում են բոլորովին այլ բանի մասին: Ռուսաստանի իշխանությունները նոր արշավ են սկսել հայաստանյան բիզնեսի եւ հատկապես այն բիզնեսների դեմ, որոնք կապված են Փաշինյանի իշխանության հետ, այսպես ասած, փաշինյանամերձ օլիգարխիայի դեմ: Ընդ որում, ռուսական մամուլն այլեւս չի էլ թաքցնում, որ դա արվում է Փաշինյանին եւ նրա իշխանությանը ֆինանսական հոսքերից զրկելու համար. «Հարված Հայաստանի վարչապետ Փաշինյանի «դրամապանակներին», որոնք գումար են կլանում Ռուսաստանից»՝ վերնագիրն ամեն ինչ ասում է:

Հերթական հարվածն ուղղված էր «Ջերմուկ գրուպ» ընկերության դեմ՝ Ռուսաստան դրա արտահանումն արգելելու նպատակով հիմքեր են ստեղծվում: Հյուսիսային Օսիայի քննչական կոմիտեն, նկատի ունենալով նոր բացահայտված հանգամանքները, 2026 թվականի մարտին վերսկսել է 65-ամյա տղամարդու մահվան գործի քննությունը՝ Ռուսաստանի քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշների համաձայն. «Սպառողների կյանքի կամ առողջության անվտանգության պահանջները չբավարարող ծառայությունների մատուցում, որի հետեւանքով անփութության պատճառով մարդ է մահացել»: 65-ամյա տղամարդը 2024 թվականի փետրվարի 11-ին Վլադիկավկազի մանրածախ առեւտրի կետում գնել եւ խմել է «Ջերմուկ» հանքային ջուր: Դրանից անմիջապես հետո նրա առողջական վիճակը կտրուկ վատացել է, եւ հոսպիտալացվել է, սակայն բժիշկները չեն կարողացել փրկել նրան, չնայած արագ բժշկական օգնությանը: Բժշկական եզրակացության համաձայն, մահվան պատճառ կարող էին հանդիսանալ հանքային ջրի մեջ առկա թունավոր նյութերը: Այն ժամանակ այդ գործը քննվեց եւ կարճվեց, բայց հիմա ի հայտ են եկել նոր հանգամանքներ:

«Մարդասպան ջուրն» արտադրվում է «Ջերմուկ գրուպ»-ի կողմից, որը Հայաստանի ամենամեծ արտադրողն է: «Ջերմուկ»-ի ընդհանուր արտադրանքի մինչեւ 60%-ը վաճառվում է Ռուսաստանում, ինչը Ռուսաստանը դարձնում է այս խոշոր հայկական ընկերության ամենամեծ շուկան»,- գրում է ռուսական մամուլը, ցույց տալու համար, որ եթե Ռուսաստանը որոշում կայացնի՝ այս ընկերության համար փակել իր շուկան, հանքային ջրի սպառումը 60 տոկոսով կկրճատվի, ինչի արդյունքում ընկերությունը կունենա հսկայական ֆինանսական կորուստներ:

Հյուսիսային Օսիայի քննչական կոմիտեն հենց այնպես չի որոշել վերաբացել քրեական գործը, նոր ի հայտ եկած հանգամանքը քաղաքական է եւ ոչ մի կապ չունի կոնկրետ դեպքի հետ, որից անցել է 2 տարուց ավելի ժամանակ: Այդ ընթացքում Ռուսաստանում վաճառվել եւ օգտագործվել է տասնյակ միլիոնավոր լիտրերով «Ջերմուկ» հանքային ջուր, եւ դրա արդյունքում որեւէ մեկը չի թունավորվել ու չի մահացել: Բայց Ռուսաստանի իշխանությունների ուղերձը «Ջերմուկ գրուպ»-ի սեփականատեր Աշոտ Արսենյանին շատ հստակ է, եթե նա սատարում է Փաշինյանի իշխանությանը, ապա պետք է պատրաստ լինի կորցնել ռուսական շուկան, նա պետք է ընտրություն կատարի Փաշինյանի եւ ռուսական շուկա մուտք ունենալու միջեւ: Սա նաեւ ուղերձ է Հայաստանի իշխանությանը եւ անձամբ Փաշինյանին, որ եթե դու շարունակում ես քո հակառուսական քաղաքականությունը, մենք դրան պատասխանելու ենք տնտեսական պատժամիջոցներով, մեզ այլեւս խաբել կամ ֆռռացնել չի հաջողվի, կամ, ինչպես ասում է ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը, Հայաստանի իշխանություններն այլեւս չեն կարողանալու մի բան ասել՝ հակառակ քաղաքականությունն իրականացնել:

Պռոշյանի կոնյակի գործարանի արտադրած կոնյակում էլ ռուսական վերահսկիչ մարմինները գտան ստանդարտների խախտում, «Ջերմուկ գրուպ»-ի արտադրանքում թունավոր եւ մարդու կյանքի համար վտանգավոր նյութեր: Նման հեռանկար է սպառնում Ռուսաստանի հետ բիզնես անող, իրենց արտադրանքը Ռուսաստանում վաճառող մյուս ընկերություններին եւս: Առայժմ դա տարածվելու է միայն փաշինյանամերձ գործարարների վրա, ընտրություններից հետո ամբողջ հայաստանյան բիզնեսի վրա: Հայաստանի իշխանությունը կարող է դրա դեմ քայլեր անել եւ Ռուսաստանից ներմուծվող ցորենի կամ արեւածաղկի ձեթի մեջ թունավոր նյութեր հայտնաբերել եւ արգելել դրանց ներմուծումն ու վաճառքը Հայաստանում: Բայց դա խփելու է հայկական բիզնեսի շահերին եւ, ամենակարեւորը՝ հանգեցնելու է գների թանկացման եւ սոցիալական դժգոհության: Մեր եւ Ռուսաստանի տարբերությունն այն է, որ եթե ռուսները կարող են ապրել առանց հայկական հանքային ջրի կամ ոգելից խմիչքների, Ռուսաստանում հանքային ջրեր ու կոնյակ արտադրողների պակաս չկա, ապա Հայաստանի համար ռուսական հումքն ու էներգակիրները կրիտիկական նշանակություն ունեն, Հայաստանի արտադրողները ռուսական շուկային այլընտրանք չունեն:

Սա հասկանում է նաեւ Փաշինյանը, հասկանում է, թե իր քաղաքականության պատճառով ինչպիսի հարվածի տակ է դնում Հայաստանի տնտեսությունը, եթե չհասկանար, չէր կեղծի եւ համոզի, թե Ռուսաստանի հետ ամեն ինչ լավ է, եւ որեւէ խնդիր չկա: Բայց այդ ամենը հասկանալով, նա իրականացնում է երկրի եւ հասարակության շահերին հակասող քաղաքականություն, որովհետեւ այդ քաղաքականությունը թելադրում է ոչ թե հասարակությունը, ինչպես որ պետք է լիներ նորմալ երկրում, այլ՝ արտաքին ուժերը, որոնց համար Հայաստանի եւ նրա հասարակության շահը ոչ մի արժեք չունի, կարեւորն իրենց աշխարհաքաղաքական շահերն են, թշնամանքը Ռուսաստանի դեմ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՕՐԲԱՆ ԵՎ «ՕՐԲԱՆ»

Հունգարիայում Օրբանը պարտվեց: Ում պարտվեց՝ էական չէ: Պարտվել է Թուրքիայի եւ Ադրբեջանի գործիքը: Այս փաստը, անշուշտ, չի կարող ոգեւորել ՀՀ իշխանություններին, չնայած որ հաղթողը սորոսական հանրահայտ գրանտակեր է: Արդեն ասացի, որ Օրբանը թուրք-ադրբեջանական գործիք էր թե՛ Հունգարիայում եւ թե՛ տարածաշրջանում՝ ԵՄ-ում: Բայց Ադրբեջանն ու Թուրքիան նրան հաջողությամբ օգտագործում էին նաեւ ԱՄՆ-ի, Ուկրաինայի, Ռուսաստանի դեմ: Ադրբեջանն ավելի հեռուն էր գնացել՝ Օրբանին օգտագործելով Հայաստանի դեմ: Օրբանի պարտության բուն պատճառը, սակայն, ուրիշի ձեռքին գործիք լինելը չէր: Հունգարիային Եվրոպայի սրտում ոչինչ չէր սպառնում: Ո՛չ սուվերեն տարածքների կորուստ, ո՛չ սովամահություն, ո՛չ պատերազմ: Պարզապես Օրբանն ինքնիշխանության չափից ավելի շատ զգացողություն ուներ, ինչը դուր չէր գալիս ԵՄ-ին, ԱՄՆ-ին եւ Ռուսաստանին: Այլ խոսքով՝ Օրբանը հունգար ժողովրդի աչքին «լավ տղա» էր խաղում: Երեկ չէ առաջին օրը այդ խաղը վերջացավ: Օրբանի օդերը փակեցին, եւ Թուրքիան ու Ադրբեջանը մնացին առանց Օրբանի: Կփոխվի՞, արդյոք, Հունգարիայի արտաքին քաղաքականությունը Օրբանից հետո: Դժվարանում եմ ասել: Անձամբ ինձ Հունգարիայի նոր ղեկավարն էլ դրական հույսեր չի ներշնչում: Ես նրանից սպասելիքներ չունեմ: Կգնա Օրբանի ճանապարհո՞վ, մի օր էլ ինքը կընկնի Օրբանի օրը, կորդեգրի՞ առավել խելացի քաղաքականություն, գուցեեւ հաջողի: Կարճ ասած՝ չգիտեմ: Սպասում եմ՝ տեսնեմ՝ ՀՀ իշխանությունները շնորհավորելու՞ են Հունգարիայի նոր վարչապետին, թե՞ չէ:

Կարող եք ասել՝ դարդդ կտրվե՞լ է՝ Օրբան ես խաղացնում: Կներեք, իհարկե, բայց ո՞վ է Օրբան խաղացնում: Ե՞ս: Ամենեւին: Օրբանն էլ, օրբանատերն էլ… Ես պարզապես, այն էլ ընտրություններից առաջ, տեսնում եմ, որ մի «օրբանատիպ» վարչապետ էլ մենք ունենք՝ բառիս բուն իմաստով՝ թուրք-ադրբեջանական գործիք, որին չես կարող մեղադրել նաեւ ինքնիշխանության մասին պակաս ճամարտակելու մեջ: Կատարյալ Օրբան… Բայց եթե Հունգարիայի Օրբանը միջազգային արենաներում իրեն պահել գիտեր, Հայաստանի «Օրբանի» վրայից գեղցիությունը թափվում է: Սա նույնիսկ սեփական ժողովրդի հետ շփվելիս է դա բացեիբաց ցուցադրում: Դրսերում խայտառակում է բոլորին՝ թե՛ սորոսական ԵՄ-ին, թե՛ «հակասորոսական» ԱՄՆ-ին, թե՛ պուտինյան Ռուսաստանին, թե՛ մեր բարեկամներին եւ թե՛ մեր հանդեպ լոյալ վերաբերմունք ունեցողներին: Աշխարհում չկա նման բան՝ Ադրբեջանի դեմ պատերազմում պարտվես, սուվերեն տարածքներ կորցնես, Թուրքիան սահմանդ չբացի, եւ դու հայտարարես, որ Ադրբեջանն է քո անվտանգության հովանավորը: Սա ի՞նչ է, եթե ոչ բացահայտ խոստովանություն, որ դու թուրք-ադրբեջանական գործիք ես, որ քեզ թուրքերն ու ադրբեջանցիներն են խաղացնում: Դու չգիտե՞ս, որ այդ նույն Թուրքիան ու Ադրբեջանը լիքը խնդիրներ ունեն թե՛ ԱՄՆ-ի, թե՛ Ռուսաստանի եւ թե՛ ԵՄ-ի հետ: Այս տարվա ապրիլի 1-ին ո՞ւր էիր գնացել: Մոսկվա: Ինչո՞ւ էիր գնացել: Աշխատանքային այցով: Հասկացանք: Կարո՞ղ ես հիմա ինձ բացատրել, թե ինչ աշխատանքներ կատարեցիր այդ այցի ընթացքում: Ոչ մի… Եթե չհաշվենք, որ Պուտինը հերթով բռնեց ստերդ ու քեզ դատարկաձեռն ուղարկեց Երեւան: Պատկերացրու, որ նույնն էլ քեզ ԵՄ-ում է սպասվում, եթե փորձես նրանց էլ հավատացնել, որ կարելի է թե՛ ԵԱՏՄ-ում լինել, թե՛ ԵՄ-ում: Թրամփին տեսնելու ախորժակդ էլ է կորել: Նա էլ է հասկացել, որ ինքնիշխանության մասին հեռանում հանքային ջրեր ու կոնյակ արտադրողների պակաս չկա, ապա Հայաստանի համար ռուսական հումքն ու էներգակիրները կրիտիկական նշանակություն ունեն, Հայաստանի արտադրողները ռուսական շուկային այլընտրանք չունեն:

Սա հասկանում է նաեւ Փաշինյանը, հասկանում է, թե իր քաղաքականության պատճառով ինչպիսի հարվածի տակ է դնում Հայաստանի տնտեսությունը, եթե չհասկանար, չէր կեղծի եւ համոզի, քիթաթերդ, մեղմ ասած, փուչիկ են, եւ ոչնչով չես կարող օգտակար լինել իր ծրագրերին: Բայց դու տես, որ թուրք-ադրբեջանական քարոզչամեքենան Հայաստանում թմբկահարում է, թե ի՞նչ հաջող այց ունեցար Մոսկվա:

Ի տարբերություն Հունգարիայի՝ Հայաստանի աշխարհագրական դիրքն ավելի բարդ է, Թուրքիային ու Ադրբեջանին ավելի մոտիկ ենք, պատերազմի վտանգն էլ հո միշտ կա: Այս պայմաններում չմտածված ինքնիշխանություն խաղալը ճոճվող կամրջի ու այծի պարն է հիշեցնում, եւ տարբերություն էլ չկա, թե կամրջի որ կողմից կգահավիժես անդունդը՝ ա՞ջ, թե՞ ձախ: Եթե Օրբանը, ամենամեծ ցանկության դեպքում էլ Հունգարիային չէր կարող հասցնել այս վիճակին, ապա մեր «Օրբանը» դա արդեն արել է ու հետդարձի ճանապարհն էլ չգիտի: Նրան մնացել է մի բան՝ Օրբանի պես «տղամարդավարի» ընդունել պարտությունն ու հեռանալ: Մնացածի մասին՝ պատերազմ, զոհեր, տարածքային կորուստներ, կոռուպցիա, թալան, կխոսենք ավելի ուշ, երբ իջնենք մազե կամրջից ու սկսենք իրական ինքնիշխանության ճանապարհների փնտրտուքը:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱՎԱԳԱՆԻ

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԻՐ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԻՍՏԻՆ ԲԵՐԵԼ

Ապրիլի 10-ին նշանակված՝ Դիլիջան համայնքի ավագանու հերթական նիստը, քվորումի բացակայության պատճառով, չի կայացել: Այդ նիստին համայնքի ավագանու 21 անդամից ներկա է եղել 8-ը: Դիլիջանի ավագանու

կազմում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն ունի 13 անդամ, ապրիլի 10-ի նիստից բացակայել են ոչ միայն համայնքի ավագանու «Ապրելու երկիր», «Հանրապետություն», «Քաղաքացու որոշում» խմբակցությունների անդամները, այլ նաեւ՝ ՔՊ խմբակցության 5 անդամ: Ավագանու ապրիլի 10-ի նիստի օրակարգում համայնքի համար կարեւոր 10 հարց էր ընդգրկված՝ Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 108/1 հասցեի 11,1 քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու, Դիլիջանի բազմագործառույթային քոլեջի շենքի հիմնանորոգման վերաբերյալ նախնական համաձայնություն տալու, Դիլիջան քաղաքում մի քանի հողամաս անվանակոչելու, Խնձորկուտ հանդամասում գտնվող մի հողամասի հողատեսքի փոփոխությունը հաստատելու, Թեղուտ գյուղում մի հողամաս օտարելու համաձայնություն տալու, Դիլիջանի ավագանու 2025թ. նոյեմբերի 7-ի որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու, Դիլիջան համայնքի 2026թ. տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին եւ այլ հարցերը:

Դիլիջանի համայնքապետարանի մեր աղբյուրները հայտնում են, որ Դիլիջանում հողամասերի կադաստրային ծածկագրերի հետ կապված՝ խառնակ վիճակ է, դրանք ճշգրտելու կարիք կա: Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը նաեւ «Քաղպայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավարն է: Նա մարտի 30-ին Ֆեյսբուքի իր էջում լուսանկարներ է հրապարակել եւ դրանց կից գրել. «Այսօր տեղի ունեցան «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կառույցի խորհրդի եւ նախաձեռնողի նիստերը, որոնց ներկա էին խորհրդի նախագահը, խորհրդի անդամները եւ կուսակցականները: Քննարկվեցին օրակարգային հարցերը: Տեղի ունեցավ նաեւ հանդիպում ՔՊ կուսակցությանը հայտ ներկայացրած դիմումատուների հետ»:

Դավիթ Սարգսյանը չի կարողանում ավագանու ՔՊ խմբակցությունն արդյունավետ ղեկավարել, ապահովել այդ խմբակցության անդամների մասնակցությունն ավագանու նիստին, ինչպես է ղեկավարում իշխող կուսակցության տարածքային կառույցը: Դիլիջանի համայնքապետարանի մեր աղբյուրները հայտնում են, որ ավագանու անդամների մի մասը խիստ դժգոհ է համայնքապետի կոպիտ վարվելակերպից, նա ավագանու անդամների հետ խոսում է այնպես, ինչպես կոլխոզի բրիգադիրը՝ բանվորների հետ: Մինչդեռ ՏԻՄ օրենքով համայնքի ավագանին է որոշումներ ընդունում, վերահսկում համայնքապետարանի եւ համայնքապետի գործունեությունը: Համայնքապետարանում դժգոհ են, որ նախկինում բենզալցակայանում բենզին լիքավորող աշխատած, անձնական գործում «սեռ» բառի դիմաց «արու» գրած Դավիթ Սարգսյանը համայնքապետարանում իրեն շրջապատել է ոչ գրագետ կադրերով: Ասում են, որ համայնքապետարանում որոշումների կայացման գործում մեծ է համայնքի ղեկավարի երիտասարդ խորհրդական Նոնա Գրիգորյանի դերը:

Նյութերը՝
Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

Ի՞ՆՉ ԵՂԱՎ, ԵՐԲ ՄԱՂԿԵՓՈՒՆՋ ԳՆԵՑԻՆ ՀՈՒՇԱՆՎԵՐ 20 ՀԱԶԱՐ ԴՐԱՄՈՎ

Նոյեմբերյան քաղաքի բնակիչ, 2005թ. ծնված Կարեն Քամալյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի բնակիչ, 2005թ. ծնված Արեն Յոլչինյանի հետ նախնական համաձայնությամբ իրացրել է կեղծ թղթադրամ՝ 20 հազար դրամանոց: Նրանք 2023թ. նոյեմբերի 8-ին, ժամը 14.50-ի սահմաններում գնացել են Նոյեմբերյան քաղաքի Երեւանյան փողոցում գործող «Գայանե Տիրացվան» ԱՁ-ի ծաղկի խանութի մոտ, թղթադրամը տվել են խանութի հաճախորդ Մարատ Լազարյանին, որ մանրի: Վերջինս նրանց է վերադարձրել 15 հազար դրամ, իսկ 5 հազարը վճարել է խանութի աշխատողին՝ գնած ծաղկեփնջի համար: Կ. Քամալյանին եւ Ա. Յոլչինյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 267 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով («Իրացնելու նպատակով կեղծ արժույթ, արտարժույթ, արժեթուղթ, վճարահաշվարկային այլ փաստաթուղթ կամ վճարային գործիք պատրաստելը, պահելը, տեղափոխելը, առաքելը կամ ձեռք բերելը կամ դրանք իրացնելը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ»):

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը հաստատված չի համարել, որ իրեղեն ապացույց համարված լազերային գունավոր տպագրման եղանակով պատրաստված մեկ հատ 20 հազար դրամ անվանական արժեքով օտարալեզու THIS NOTE A LEGAL TENDER, SOUVENIER MONY OF ARMENIA գրառումներով թղթադրամը կեղծված է, կամ այն ստեղծվել կամ այլ փոփոխությունների է ենթարկվել մեղադրյալների կողմից, եւ այդ մասով մեղադրանքը մերժվել է: Բայց 2025թ. դեկտեմբերի 1-ին դատավոր Սասուն Մխիթարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով («Խարդախությունը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ») Կարեն Քամալյանին մեղավոր է ճանաչել խարդախության մեջ եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 2 տարի ժամկետով, Քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվեկցել Կ. Քամալյանի՝ անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը՝ 2 ամիս 2 օրը, եւ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 1 տարի 9 ամիս 28 օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված կանոնների համաձայն՝ վերացնել Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2023թ. մարտի 20-ի դատավճռով Կ. Քամալյանի նկատմամբ նախորդ մեղադրանքով պայմանականորեն չկիրառված պատիժը եւ դատավճիռների համակցությամբ, սույն քրեական գործով նշանակված 1 տարի 9 ամիս 28 օր ժամկետով ազատազրկմանը մասնակիորեն գումարել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2023թ. մարտի 20-ի դատավճռով Քամալյանի չկրած 2 տարի 5 ամիս ազատազրկումը եւ վերջնական պատիժ սահմանել ազատազրկում՝ 2 տարի 6 ամիս ժամկետով: Դատարանն Արեն Յոլչինյանի նկատմամբ էլ պատիժ է նշանակել հանրային աշխատանքներ՝ 126 ժամ տեւողությամբ, եւ տուգանք՝ 375 հազար դրամի չափով:

Քամալյանի պաշտպան Ներսես Չիլինգարյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով նրա նկատմամբ նշանակված պատժի տեսակի եւ չափի մասով բեկանել դատարանի 2025թ. դեկտեմբերի 1-ի դատավճիռը եւ ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր դատաքննության: Վերաքննիչ դատարանում նիստեր են կայացել: Մարտի 24-ի նիստում որոշվել է Կ. Քամալյանի նկատմամբ նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն:

Որոշել են հարկել գերշահույթ ստացողներին

Ռուսաստանում հարկային նոր փոփոխություն կկատարվի: Փաստացի, արդեն որոշվել է գերշահույթ ստացողների հարկման հարցը: Մի քանի տարբերակ կա դրված ՌԴ պետդումայում, որոնցից էլ կկատարվի ընտրություն: Ըստ ոլորտների եւ սեկտորների, ձեռնարկությունները գերշահույթ ունենալու պարագայում կհարկվեն 10-30 տոկոսով: Նաեւ կորոշվի այն եկամտի սահմանաչափը, որից բարձր արդեն ստացած եկամուտը կհամարվի գերշահույթ եւ կհարկվի: Ամենաշատ ձեռնարկությունները, որոնց վրա կտարածվի գերշահույթի այս նոր հարկատեսակը, պատկանում են քիմիական արդյունաբերության եւ միներալային պարարտանյութերի արտադրության ոլորտներին: 2025 թվականին այս ոլորտների ձեռնարկությունների եկամուտներն ավելացել են 51,1 տոկոսով: Տնտեսության մյուս սեկտորները, որոնց վրա կտարածվի գերշահույթի հարկատեսակը, մարկետփլեյսներն են՝ 70 տոկոս ավելացված եկամտի ցուցիչով, եւ ոսկու արդյունաբերությունը՝ մինչեւ 44 տոկոս եկամտային աճի ցուցիչով:

Ուշագրավ է այն, որ բանկային սեկտորը, ինչպես գրում է nezigar տելեգրամյան ալիքը, գերշահույթի հարկման տակ չի մտնում, թեեւ ռուսական տնտեսության ամենաեկամտաբեր սեկտորներից է համարվում: Բանկային լոբբիստները նկատում են, որ հարկային անձեռնմխելիությունը, որը վայելում են, կապված է այն բանի հետ, որ բանկային սեկտորի կապիտալի աճը, այսպես թե այնպես, ներդրումների եւ վարկավորման տեսքով նորից ներարկվում է տնտեսության մեջ: Փորձագետների մի խումբ, սակայն, առանձնապես ուրախացած չէ այս նոր հարկատեսակով եւ հորդորում է գործադիր իշխանությանը, նախքան գործնական քայլերի գնալը, հավասարակշռել որոշումները՝ հաշվի առնելով ինֆլյացիան, նաեւ՝ ուշադրություն դարձնել ներդրումային քաղաքականությանը եւ արտոնություններին, որոնք տրամադրվում են տնտեսական բավականին բարդ իրավիճակում գտնվող ներկայիս ձեռնարկություններին, որպեսզի նրանք կարողանան առաջ գնալ կամ պահպանել ունեցած հզորությունները: Ի դեպ, իշխանություններն ակնկալում են գերշահույթի հարկից ստանալ տարեկան ոչ պակաս, քան 500 միլիարդ ռուբլի, որը կգնա պետական գանձարան:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑՈՒՄ

«Ա՞Ռ ԵՔ ՀԱՄԱՐՈՒՄ», ԹԵ՞ «ԻԳՆՈՐ» ԵՔ ԱՆՈՒՄ. ՈՒՂԻՂ ՀԱՐՑԵՐ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻՆ

Հարգելի՛ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյան, Ձեզ հրավիրում եմ զրույցի: Ոչ թե նախապես հաստատված, «պրոտոկոլային» հանդիպում եւ ոչ թե զրույց լրագրողի, այլ՝ լոռեցիների անունից ու լոռեցիների հետ: Դուք կամ «առ եք համարում», կամ «իգնոր» եք անում լրագրողին ու հանրությանը: Իգնոր, այսինքն, նշանակում է չտեսնելու, չլսելու եք տալիս, արհամարհում եք, չեք արձագանքում, չեք մտնում խոսակցության մեջ, ձեւացնում եք, թե հարցեր չկան:

Լեզվի հարցը: Ձեր կայքում հրապարակվել էր այսպիսի վերնագրով հապճեպ մի լուր՝ «Ծրագրի արժեքը 660 մլն դրամ է, երկարությունը՝ 3 կմ»: Իմ հոդվածից հետո այն մարզպետարանի կայքից հանվել է: Մի՞թե վատ է՝ անհեթեթությունն այլեւս որեւէ մեկի աչքը չի ծակի: Մինչդեռ կարող էիք նաեւ շտկել: Հիշեցնեմ, որ այդ հոդվածում միայն ձեր կայքէջում նկատված սխալների ու մայրենի լեզվի խաթարումների մասին չէր: Մենք աղաղակող օրինակներ ենք բերել թե՛ մարզպետարանի, թե՛ համայնքապետարանների կայքերում, պաշտոնական հաղորդագրություններում առկա անհարթությունների՝ անհասկանալի թարգմանությունների, «կողմից»-ներով, «ծրագրի շրջանակներում»-ներով ծանրաբեռնված նախադասությունների, բովանդակային այլ սխալների մասին: Տեղեկացրել ենք նաեւ համայնքներին: Չեն պատասխանել, իսկ սխալները մինչ օրս «տեղում» են: Գուցե լեզուն էլ է այն ոլորտներից, որը եւս «առ եք համարում»: Թեեւ սա վերաբերում է նրան, թե ինչ լեզվով է խոսում պետությունն իր քաղաքացիների հետ:

Դեբեդի ջրավազան: Հիշո՞ւմ ենք, թե՞ սպասում ենք հաջորդ ջրհեղեղին: Դեբեդի մասին մենք գրել ենք բազմիցս: Դուք շատ լավ գիտեք՝ ինչ կարող է անել գիժ Դեբեդը, երբ դուրս է գալիս իր հունից: Տեսել ենք, թե ինչպես են հաշված վայրկյաններում ջրի հետ քշվում, կործանվում, անհետանում տներ, այգիներ, ճանապարհներ, կամուրջներ, օժանդակ շինություններ, ընտանի կենդանիներ: Նախորդ հեղեղումի հետեւանքները դեռ չեն վերացվել ամբողջովին: Օրերս հերթական անգամ Դուք տնակորույս ընտանիքին հանձնեցիք պետության հատկացրած միջոցներով գնված նոր տան բանալիները: Այս տարի տեղումները շատ են: Ի՞նչ է արվել, որ աղետը չկրկնվի: Ձեր կայքէջից տեղեկանում ենք՝ դիտարկումներ, այցեր, զգուշացումներ՝ «հեռու մնացեք ափերից»: Այս վերջին միտքը Դուք եք ասել, հարգելի՛ մարզպետ, մի՞թե սա բավարար է: Սա արձանագրո՞ւմ է, թե՞ լուծում: Հարցն ինչո՞ւ չեք բարձրացնում կառավարությունում, նախարարություններում, ինչո՞ւ չեք պահանջում համակարգային քայլեր:

Տանձուտ: Մաքրվեց գետը, բայց... սաղարթախիտ ծառերն ո՞ւր անհետացան: Տանձուտի հունի մաքրման ծրագիրը ողջունելի է, բայց դա անելիս օրերս տապալվեց 7-8 առողջ, սաղարթախիտ ծառ: Մենք բարձրաձայնել ենք՝ նորից համառ ու հերթական լռությունը: Մի՞թե սա երկրորդական խնդիր է: Եվ այդ ծառերն ո՞ւմ էին խանգարում: Նրանց արտադրած թթվածինը մեզ՝ քաղաքացիներիս, ծառերը ոչնչացնողներին, ոչնչացնելու թույլտվությունը տվողներին, անձամբ Ձեզ, հարգելի մարզպետ, նաեւ Վանաձորի համայնքապետին, արդյո՞ք օգտակար չէին:

Եղեւնու պուրակ: Սա հաջորդ լուրջ թեմաներից է: Վանաձորի «Լոռի» մարզադաշտից վեր եղեւնու պուրակը կրկին վտանգի տակ է: Կան արդեն հատված ծառեր, տարածքը «մաքրում» են՝ ապագա կառուցապատման համար: Ահազանգել ենք, խնդրել ենք պարզել՝ ով է կառուցում, ինչ է կառուցում, ինչ իրավունքով: Չեք արձագանքել: Ինչո՞ւ չեք գնում այդ պուրակ, բայց գնում եք համայնքներ, ճանապարհներ, ծրագրեր դիտարկելու: Մի օր էլ գնացեք եղեւնու պուրակ: Վաղը մարդիկ կարող են հարցնել՝ «Լրագրողը գրել է, հարգելի մարզպետ, ի՞նչ եք արել»: Նախկինում էլ այդ տարածքի շուրջ եղել են որոշումներ, որոնք, մեղմ ասած, հարցեր են առաջացնում: Խոսքը գնում է այն մասին, որ նախկին մարզպետներից մեկի օրոք այդ տարածքի մի հատված փաստացի դուրս է բերվել իր բնական կարգավիճակից՝ փոխանցվելով գործարար շահերին: Հիմա հարց՝ դուք դա ուսումնասիրե՞լ եք, թե՞ սա էլ այն թեմաներից է, որոնց մոտենալն «անհարմար» է: Մարդիկ խոսում են Դսեղում, Ծաթերում, Օձունում: Սա ամենակարեւորն է: Դսեղում մեզ ասում էին. «Գյուղատնտեսությամբ զբաղվելը գնալով ավելի դժվար է դառնում, ոչ ոք չի լսում, ոչ ոք չի արձագանքում»: Ծաթերում՝ «Մնում ենք մենակ մեր խնդիրների հետ, թանկություն կա, շուկա չկա, օգնություն չկա»: Օձունում՝ «Գրում եք, խոսում եք, բայց ի՞նչ է փոխվում, եթե վերեւում չեն արձագանքում»: Սրանք էլ են երկրորդական հարցեր: Թե՞ պարզապես՝ էլի «անհարմար» հարցերի շարքից են: Լրագրողը կարող է լռել, բայց մարդիկ չեն լռում՝ պահանջում են եւ ճիշտ են անում:

Ի՞նչ եք անում Դուք: Մենք տեսնում ենք Ձեր ակտիվությունը՝ համայնքային այցեր, դիտարկումներ, մասնակցություն ծրագրերին: Լավ է, բայց որտե՞ղ են ծրագրերը, գաղափարները: Գյուղատնտեսության, արդյունաբերության ոլորտներում, ներդրումներ ապահովելու խնդիրներում:

Կրթությունից դուրս մնացած երեխաներ: Լռությունն այստեղ արդեն վտանգավոր է: Մեր տեղեկություններով, մարզում կա առնվազն 38 երեխա, որոնք չեն հաճախում դպրոց: Հիմա հարց՝ դա Ձեզ անհանգստացնո՞ւմ է: Եթե այո՝ ինչո՞ւ չեք արձագանքում: Եթե ոչ՝ ապա սա արդեն լուրջ խնդիր է: Բայց ասեմ՝ սա այն թեման չէ, որը կարելի է «իգնոր» անել: Որովհետեւ այստեղ խոսքն ապագայի մասին է: Մի կարճ ու թեւավոր խոսք կա՝ «Դպրոցի դուռը փակողը... բանտի դուռը կբացի»: Սա ես չեմ ասել: Հարգելի՛ մարզպետ, արհամարհելու փոխարեն՝ արձագանքեք, իգնոր անելու փոխարեն՝ խոսեք:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ապարան եւ Լոռի

Ապրիլի 11-ի առավոտյան Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ «ուրախ ավտոբուսը» կրկին պետք է մեկներ մարզ, այս անգամ՝ Լոռի: Ավտոբուսի մեկնելուց առաջ նույն երթուղով Լոռի էր ուղեւորվել նաեւ ոստիկանության գվարդիայի ավտոբուսը՝ մարզում Նիկոլ Փաշինյանի անվտանգ շարժն ապահովելու համար: Ամեն անգամ են ուժայիններն ուղեկցում նրան, թեեւ պարզ չէ, թե ինչու են Երեւանից մեկնում, եթե բոլոր մարզերում էլ ոստիկաններ կան եւ ոչ քիչ թվով:

Բայց այս անգամ ոստիկանության ավտոբուսի մասնակցությամբ տեղի է ունեցել ողբերգական ավտովթար՝ մահվան ելքով, բազմաթիվ վիրավորներով: Քննչական կոմիտեն հայտարարել էր, որ գվարդիայի ավտոբուսը մեկնելիս է եղել Լոռու մարզ՝ ծառայություն իրականացնելու, իսկ 2 օր առաջ գվարդիայի ղեկավար Հայկ Բաբայանը մեր հարցին ի պատասխան ասել էր՝ ավտոբուսը մեկնում էր Արագածոտնի մարզ: Հիմա Լոռի՞, թե՞ Արագածոտնի մարզ էին շտապում գվարդիայի աշխատակիցները: Տեղեկացանք, որ ավտոբուսն Ապարանում մի խմբի պետք է իջեցներ, իսկ մյուսները պետք է շարունակեին ճանապարհը՝ հասնեին Լոռի եւ ուղեկցեին ՀՀ վարչապետի շարասյունը: ՆԳՆ-ից մեզ փոխանցեցին. «ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի ծառայողները նշված տրանսպորտային միջոցով ուղեւորվել են Լոռու եւ Արագածոտնի մարզեր՝ ծառայություն իրականացնելու»:

ԼԵԳԵՆԴԱՐ ՖԻԼՄ, ՈՐՆ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

Սովետա-ֆրանս-շվեյցարական արտադրության «Թեհրան-43» կինոնկարը կարելի է համարել սովետական կինոարվեստի գլուխգործոցներից մեկը, չնայած այն համատեղ արտադրության է: Կինոնկարի ռեժիսորներն են Ալեքսանդր Ալովը եւ Վլադիմիր Նաումովը: Ֆիլմը թողարկվել է սովետական Մոսֆիլմ, ֆրանսիական Mediterranee Cinema եւ շվեյցարական Pro Dis Film ընկերությունների կողմից: Սյուժեի հիմքում երկրորդ աշխարհամարտի շրջադարձից հետո Թեհրանում 1943 թվականին կայանալիք Ստալին-Չերչիլ-Ռուզվելտ գագաթնաժողովն է: Ֆաշիստական իշխանություններն ահաբեկիչների խումբ են ուղարկում, որպեսզի խափանեն այդ գագաթնաժողովը: Այն գլխավորում է գործակալ Շերները: Այցի պաշտոնական նպատակը մեծահարուստ իրանցու դիակի ուղեկցումն է, որը մահացել էր Շվեյցարիայում: Այդ մահն ինքնին, սակայն, կազմակերպված սպանություն էր: Մահացած իրանցու փաստաբանը՝ պարոն Սիմոնը, հանգուցյալի դիակը Թեհրան է տեղափոխում հուղարկավորման գրասենյակի աշխատակցի եւ թարգմանչուհու հետ: Թարգմանչուհին՝ Մարի Լունին, ծագումով ռուս է: Տիրապետում է ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն եւ փարսի լեզուներին: Գերեզմանափորի անվան տակ քողարկվում էր Մաքս Ռիշարը՝ իրական մարդասպանը, որին վարձել է գործակալ Շերները: Ժնեւի օդանավակայանում Մարին ծանոթանում է Անդրեի հետ: Նա չգիտի, որ Անդրեն սովետական հետախույզ է, որը գաղտնի մեկնում է Թեհրան՝ ապահովելու բանակցությունների անվտանգությունը: Իրանցու հուղարկավորությունից հետո սպանվում է փաստաբան Սիմոնը: Նախօրեին փաստաբանն անկեղծանում է, որ իր վստահորդ հարուստ իրանցու մահը պատահականություն չի եղել: Մարին փրկում է Անդրեին: Արդյունքում նրանք կարողանում են շատ ջանքեր ներդնել, որպեսզի բարդ ահաբեկչական պլանը ձախողվի, եւ բանակցությունները կայանան: Շերներն ու մարդասպան Մաքս Ռիշարը կարողանում են խույս տալ հատուցումից: 1970-ականներին այս իրադարձության նկատմամբ հետաքրքրությունը վերածնվում է, քանի որ ի հայտ է գալիս մինչ այդ

կորսված համարվող ժապավեն: Կինոնկարը 1981 թվականին արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի եւ դարձել խորհրդային կինովարձույթի ամենադիտված ժապավեններից մեկը: Այն ունեցել է 47 միլիոն 500 հազար դիտում: Սովետական կինոյի պատմության մեջ առաջատար կինոնկարի ցանկում այն գրավում է 42-րդ հորիզոնականը: Ֆիլմում հնչում է Շառլ Ազնավուրի Une vie d'amour երգը: Նկարահանվել են Արմեն Ջիգարխանյանը, Իգոր Կոստոլեւսկին, Կլոդ Ժադը, Ալեն Դելոնը, Կուրտ Յուրգենսը եւ ժամանակի այլ լեգենդար դերասաններ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ ՁԱՅՆԵՐԻ ՓՈՇԻԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՉՈՒՆԵՑԱՎ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հունգարիայի ընդդիմադիր առաջնորդ Պետեր Մաջյարը կիրակի օրը հաղթեց Հունգարիայի խորհրդարանական ընտրություններում՝ պարտության մատնելով երկիրը 16 տարի կառավարող Վիկտոր Օրբանին: «Ընտրության արդյունքները վերջնական չեն, բայց իրավիճակը հասկանալի է եւ հստակ»,- ապրիլի 12-ի երեկոյան իր աջակիցներին հայտարարել է Օրբանը: «Ընտրության արդյունքը մեզ համար ցավալի է, բայց՝ հստակ: Կառավարելու պատասխանատվությունը եւ հնարավորությունը մեզ չեն տրվել: Ես շնորհավորել եմ հաղթողին»,- ասել է նա: «Իմ համաքաղաքացիներ, մենք արեցինք դա»,- ընտրողների առջեւ ունեցած ելույթում հայտարարել է Մաջյարը եւ հավելել. «Միասին մենք վերջ դրեցինք Օրբանի ռեժիմին: Միասին մենք ազատագրեցինք Հունգարիան, վերականգնեցինք մեր հայրենիքը»: Հունգարիայի ընտրությունների արդյունքները ոգեւորել են թե՛ Հայաստանի ընդդիմությանը, թե՛ իշխող թիմին: Զրուցել ենք քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանի** հետ:

- Օրբանի պարտությունից Հայաստանի իշխանությունն ու ընդդիմությունը հավասարապես ոգեւորվել են, սակայն այս ընտրությունների ամենաառանցքային մասը թերեւս այն է, որ իրականում արտաքին ազդեցություններն առ ոչինչ են, եթե տվյալ երկրի հասարակությունը վճռական ու միահամուռ կերպով պայքարում է իշխանությունների դեմ: Գաղտնիք չէ, որ Օրբանին աջակցում էր Դոնալդ Թրամփը, նա ջերմ հարաբերություններ ուներ ՌԴ նախագահ Պուտինի հետ, սակայն, ինչպես տեսանք, ամեն բան անզոր գտնվեց վճռական հասարակության առջեւ: Ո՞րն է Ձեր տեսակետը այս պրոցեսների մասին:

- Կյանքում, առհասարակ, այդ թվում՝ քաղաքականության մեջ, քիչ է պատահում, որ ամեն բան լինում է սեւ ու սպիտակ: Դա լինում է այն պարագայում, երբ դու հասկանում ես, որ քո երկրի ղեկավարը սպասարկում է, օրինակ, ինչ-որ արտաքին ուժերի շահեր: Այս պարագայում տրամաբանական է, որ թե՛ Հայաստանի ընդդիմությունը եւ թե՛ իշխանությունը կարող են ուրախ լինել նույն երեւույթի համատեքստում: Դուք շատ ճիշտ նշեցիք՝ արտաքին ազդեցությունը կարող է ունենալ զրո ազդեցություն, եթե հասարակությունը մոբիլիզացված է: Մենք տեսանք, որ Հունգարիայում շուրջ 6 մլն մարդ մասնակցեց ընտրություններին՝ մասնակցության թիվը կազմել է 77 տոկոս, իսկ, օրինակ, 2022 թվականի ընտրությունների ժամանակ ընտրություններին մասնակցել էր ընտրողների 70 տոկոսը: Այսինքն՝ 7 տոկոսով տարբերվեց այս ընտրությունն ակտիվությամբ: Այն քաղաքական ուժը, որը հաղթանակ տարավ, բացի նրանից, որ Օրբանի կուսակիցն էր երկար ժամանակ եւ, այսպես ասած, գիտեր՝ ում եւ ինչպես քննադատել, կարողացավ լայն շերտերին միավորել: Նա վարեց ճիշտ քաղաքականություն, եւ Հունգարիայում ձայների փոշիացում տեղի չունեցավ, հետեւաբար, մենք պետք է հետեւություններ անենք: Արտաքին ազդեցությունն ունի զրո ազդեցություն, հատկապես Թրամփի եւ Վենսի ազդեցությունը, որն օգտագործում էր թե՛ Օրբանը, թե՛ Հայաստանի իշխանությունները: Ամերիկայի Հանրապետական կուսակցությունը փաստացի ունի զրո ազդեցություն այլ պետությունների ընտրությունների վրա: Ակտիվ մասնակցությունը եւս խիստ կարեւոր նախապայման էր՝ հաղթանակի համար, ինչպես նաեւ՝ ընտրություններին քիչ թվով ուժեր մասնակցեցին: Այս ամենը նպաստեց նրան, որ Հունգարիայում տեղի ունեցավ իշխանափոխություն: Սակայն պետք է մի բանի վրա ուշադրություն դարձնել. մենք մեկ ասում ենք, որ արտաքին ուժերի ազդեցությունը դերակատարում չունեցավ ընտրությունների վրա, սակայն չպետք է մոռանալ, որ Եվրոպան ակտիվորեն մասնակցեց այս ընտրական ցիկլին, մասնակցեցին նաեւ ուկրաինացիների շնորհիվ, հավանաբար, հենց ուկրաինացիներին էին գաղտնալսել տեղի ԱԳ նախարարին, եւ, որ ամենակարեւորն է՝ Հունգարիայում կարողացան ստանալ նախընտրելի մեդիապատկեր, ինչը նույնպես շատ կարեւոր է: Ստացվում է, որ Ամերիկան չկարողացավ օգնել Օրբանին, սակայն Եվրոպան օգնեց ընդդիմադիր թեկնածուին, եւ նա գլոբալիստական ուժերի շնորհիվ հաղթանակ տարավ:

- Օրբանը պաշտոնավարեց շուրջ 16 տարի: Ինչո՞ւ էր բնակչությունը նրանից այդքան դժգոհ:

- Պատճառը կոռուպցիան էր: Խոր համակարգված կոռուպցիան նպաստեց այդ ամենին: Այդ պրոցեսները որոշակիորեն նման են թե՛ ներկայիս Հայաստանին, թե՛ 2018-ի Հայաստանին: 2018 թվականի գարնանն ինչու հասարակությունը փողոց դուրս եկավ եւ Նիկոլին իշխանության բերեց. որովհետեւ ինչ-որ մարդկանցից կազմված խմբերին ամեն ինչ կարելի էր, եւ որեւէ մեկը չէր պատժվում իր արարքների համար: Թեպետ այսօրվա Հայաստանում եւս իրավիճակը նույնն է: Էական տարբերություն չկա: Այժմ պետք է հասկանալ՝ կարո՞ղ ենք մենք էլ այս համակարգը շրջանցել, թե՞ ոչ:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 14.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՈՉ ԹԵ ՌԵՎԱՆՇ, ԱՅԼ ԵՐԿՐՈՒՄ ԲԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Ապրիլի 11-ի հանրահավաքը, անշուշտ, ոչ միայն Սամվել Կարապետյանին ու «Ուժեղ Հայաստանին» աջակցող հանրահավաք էր, այլ նաեւ Հայաստանի ու հայ ժողովրդի՝ երկրում բան փոխելու կամքի դրսեւորում: Իհարկե, ինչ-որ բան փոխելու կամքի առկայությունը երկրում բան փոխելու կարեւոր նախապայման է: Սակայն այդ կամքի առկայությունն ամենեւին չի պակասեցնում այդ փոփոխությունը ճիշտ ձեւով անելու անհրաժեշտությունը:

Այդ փոփոխությունը ճիշտ փոփոխություն դարձնելու ուղին, թերեւս, նրան ավելորդ զգացմունքայնությունից ու անտեղի ոգեւորությունից զերծ պահելն է: Մենք պետք է հասկանանք, որ այսօրվա Հայաստանի համար ճիշտ փոփոխությունը ոչ թե զգացմունքներով ու ոգեւորությամբ, այլ ռացիոնալությամբ ու ճիշտ հաշվարկներով աչքի ընկնող փոփոխությունն է: Իհարկե, ինչպես բոլոր ժամանակների, այնպես էլ այսօրվա Հայաստանի համար ճիշտ փոփոխությունը չի կարող հանձնվելու եւ կարմիր գծեր չունենալու փոփոխություն լինել: Բայց այն որքան չի կարող հանձնվելու ու կարմիր գծեր չունենալու, նույնքան էլ չի կարող ռեւանշի ու պատերազմի մասին փոփոխություն լինել:

Այս իմաստով, Հայաստանի ուզած փոփոխությունը ո՛չ Թուրքիային եւ ո՛չ էլ Ադրբեջանին պատերազմ հայտարարող եւ նրանց նկատմամբ ռեւանշի ձգտող փոփոխությունը չէ: Հայաստանի ու հայ ժողովրդի ուզած փոփոխությունը Հայաստանի տնտեսությունն արդիականացնող, նրան նոր իմաստ ու բովանդակություն հաղորդող փոփոխությունն է: Մյուս հանգամանքը, որի հարցում սպասվող փոփոխությունը չի կարող տարընթերցումների տեղ թողնել, Հայաստանի ու Հայաստանով անցնող կոմունիկացիոն ուղիների բացվելու հանգամանքն է: Մենք պետք է հասկանանք, որ Հայաստանի համար անընդունելի ոչ թե Թրիփփն ու աբխազական երկաթուղին համադրող, այլ դրանք միմյանց հակադրող փոփոխությունն է: Այսօրվա Հայաստանն աշխարհի հետ կապելու համար այնքան, որքան Թրիփփի գործարկումը, նույնքան էլ աբխազական երկաթուղու վերագործարկումն է կարեւոր:

Պետք է հասկանանք, որ Հայաստանի համար ճիշտ փոփոխությունը Հայաստանն աշխարհի ու տարածաշրջանի մասը դարձնող փոփոխությունն է: Իսկ այդ փոփոխությունը ոչ թե այդ երկուսից մեկը բացելն ու մյուսի բացումը խոչընդոտելն է, այլ այդ երկուսի բացվելու համար ջանք ու միջոց չխնայելը:

Մյուս հանգամանքը, որին սպասվող փոփոխությունն ու այն բերողները պետք է լրջությամբ վերաբերվեն, ազգային ու հասարակական համերաշխությունն է: Քանի որ մենք, որպես ժողովուրդ, 2018-ը տեսած եւ 2018-ին երկրի նախագահ մերժած ժողովուրդ ենք, պետք է հասկանանք, որ այսօրվա Հայաստանի ուզած փոփոխությունը ո՛չ Նիկոլին եւ ո՛չ էլ որեւէ մեկին մերժելու եւ պատժելու համար չէ: Հայաստանի ուզած փոփոխությունը Հայաստանը հզորացնող, այն ավելի համերաշխ ու ավելի ուժեղ դարձնող փոփոխությունն է:

Դիլիջանը ո՞նց կմրցի եվրոպական քաղաքների հետ

Տուրիստական Դիլիջան քաղաքն առաջադրվել է World Travel Awards մրցանակաբաշխության մասնակից՝ «Եվրոպայի առաջատար զարգացող ուղղություն-2026» անվանակարգում: Այդ անվանակարգում առաջադրված եվրոպական 13 քաղաք-թեկնածու կա, որոնց օգտին World Travel Awards-ի ինտերնետային կայքում քվեարկություն է ընթանում: Դիլիջանում հասարակական զուգարան չկա, որ տուրիստներն օգտվեն, սպանդանոց չի գործում՝ Դիլիջանի հյուրանոցներում, սննդի օբյեկտներում իրացվող միսը սպանդանոցային ծագում չունի, կարող է վտանգ ներկայացնել օգտվողների համար: Դիլիջանի տարբեր հատվածներում աղբի կույտեր են, կենտրոնական փողոցներում՝ մեծ ջրափոսեր: Այդպիսի Դիլիջանը ո՞նց կարող է եվրոպական քաղաքների հետ մրցակցել եւ հաղթող ճանաչվել:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am